

1337

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱՅԻ

ՊԱՐՏՈՒՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1893-1921



1922

Մկրտչ. Վ. Զոհմանյան

Կ. ՊՈԼԻՍ



9(= 91. 93)


ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱՅԻ

ՊԱՐՏՈՒՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1893-1921

514
173



Մայիսի 1. 1921 թ.

Կ. ՊՈԼԻՍ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱՅԻ ՊԱՐՏՈՒՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1893-1921

Ամենապատիւ

Տ. Տ. Զաւէն Ս. Արեւայ. Տէր-Եղիանեան

Պատրիարք Հայոց եւ Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Աս

Բերայի Պարտուց Հատուցման Յանձնաժողովս իր հրաժարականէն յետոյ, որ պատիւ ունեցած էր մատուցանելու Զերդ բարձր Սրբազնութեան՝ իբր նախագահի Ազգ. Կեդր. Վարչութեան, այս անգամ կուգայ ներկայացնել իր ընդհանուր համարադրութիւնը:

Եանձնաժողովս իր պաշտօնավարութեան շրջանին, ինչպէս իրեն տրուած հրահանգին մէջ որոշապէս կը տեսնուի, ինչ տարուան համար պաշտօնի կոչուած է և իր պաշտօնավարութեան իւրաքանչիւր շրջանի վախճանին վերահաստատուած է, միշտ պակասեալ անդամներու լրացմամբ և նախորդներուն վերընտրութեամբ:

Ինչպէս հրահանգը կը տրամադրէր, Եանձնաժողովս ամէն տարի կանոնաւորապէս իր հաշիւները ներկայացուցած է Ազգ. Կեդր. Վարչութեան և պատճէնը հաղորդած է Բերայի Թաղ. Սորհուրդին, ինչպէս նաեւ հնդամեայ շրջաններու վախճանին իր հրաժարականին հետ, իրենի ներկայած է նաեւ ընդարձակ տեղեկագիրներ, որոնք Տնտեսական Սորհուրդի կողմէ քննուած և վաւերացուած են:

Քաղաք. Ժողովը, ասկէ զատ պարբերաբար յատուկ քննիչներ ղըրկելով մեր գործառնութեանց տեղեկացած է: Հետեւաբար Եանձնաժողովս իր համարադրութեան պարտականութիւնը լիովին կատարած է, սակայն աւելի որոշ գաղափար մը տալու համար իր մօտաւորապէս երեսնամեայ գործունէութեան վրայ, օգտակար դատեց ներկայացնել այս ընդհանուր տեղեկագիրը:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

1870 Մայիս 24ին Բերայի մեծ հրդեհէն յետոյ վարչական տնօրինութեամբ կազմուած էր Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Կալուածոց

Հոգաբարձութիւն մը, որ պաշտօն ունէր թաղին հրկիզեալ կալուածները վերայինելու :

Այս Գանձաւաժողովը 1893ին կը ներկայացնէ իր վերջնական հրաժարականը Վարչութեան և դորձէ կը քաշուի :

«Ազգային Վարչութեան Քաղ. Ժողովը», ինչպէս 3 Յունիս 1893 թուակիր և համար 693 պաշտօնագիրը կը հաւաստէ, «անոր յաջորդին ընտրութեան խնդրոյն նկատմամբ Քաղ. Խորհրդոյ ներկայացուցած դիտողութիւններն ու առաջարկութիւնները լսելէ յետոյ՝ որոշած էր կալուածոց ճիւղի մատակարարութեան համար Թաղական Խորհուրդէն անջատ մարմին մը կազմակերպել՝ 1872 թուականին Ազգային Վարչութեան կողմէ սահմանեալ սկզբանց համաձայն, և իւր Դիւանին յանձնած էր Թաղական Խորհրդոյ հետ լրանակցութեամբ ուսումնասիրել այս խնդրոյն վերաբերեալ վարչական նախորդ որոշումներն ու սահմանել պարագաները :

«Քաղաք. Ժողովը... Դիւանին կողմէ մատուցեալ տեղեկագրին վրայ լրացուց իւր տնօրէնութիւններն և Թաղական Խորհուրդէն անկախ, ինքնուրոյն և ուղղակի առ Ազգ. Վարչութիւնն համարատու մարմնոյ մը յանձնեց թէ՛ կալուածները մատակարարելու և թէ՛ պարտքերը հատուցանելու հոգն, անուանելով զայն «Բերայի Պարտուց Հատուցման Գանձաւաժողով» և սահմանելով հնդամեայ չրջան մը անոր պաշտօնավարութեան համար :»

Քաղ. Ժողովի որոշմամբ — ինչպէս այդ պաշտօնագիրը ցոյց կուտար — այդ Գանձաւաժողովին պաշտօնը պիտի բլլար.

«Ա. Եկեղեցւոյ բոլոր կալուածները վարձու տալ և եկամուտը դանձել :

«Բ. Կալուածական տուրքերը և ապահովագրութեան ծախքերը հոգալ :

«Գ. Հարկ եղած նորոգութիւնները կատարել :

«Դ. Ամսական 75 Լիրա յանուն կրթական ծախուց Թաղական Խորհրդոյ Մատակարար յանձնել :

«Ե. Պարտուց տուցող և մայր դրամը վճարել և զայն հետգհետէ ջնջել :

«Զ. Տասնամեայ միջոցի մէջ պարտքերն ամբողջովին ջնջելու համար տարեկան գլխավճարի 10% համեմատութիւնն անվթար պահելու պայմանաւ կրթական ամսական գումարը ամօրհանարար 100 Լիրայի բարձրացնել, ստանալով կանխաւ Ազգային Վարչութեան հաւանութիւնը :

«Է. Տարեկան համարատուութիւնը մատուցանել առ Կեդրոնական Վարչութիւն և սոյն համարատուութեան հաշուեցոյցի մէկ օրինակը հաղորդել առ Թաղական Խորհուրդը :»

Քաղ. Ժողովը միեւնոյն ատեն կ'ընտրէր առաջին Բերայի Պարտուց Հատուցման Գանձաւաժողովին անդամները որոնք էին՝

Տեառք՝ Յովհաննէս Էսսեան (Ասեճապէս)

Բարսէղ Հաշմեան (Ասեճապէս)

Կարապէտ Զեյնեան (Քանճապէս)

Զեմոր Պէյ Մեքսիկեան

Արաշէս Մկրտչեան

Յանձնաժողովին անդամները իրենց պաշտօնը կ'ընդունին, պայման դնելով որ Սբյանիտ Բաֆէի շինութիւնը որ այն ատեն սկսուած էր Բերայի Թաղական Խորհուրդի միջոցով, շարունակուի նոյն մարմնոյն ձեռքով, առանց իրենց գործակցութեան և միջամտութեան:

Յանձնաժողովին անդամները 19 Յունիս 1893ին իրենց առաջին նիստն ընելով, Դիւանի ընտրութիւն կը կատարեն:

Յանձնաժողովս կ'ստանայ նախորդ Կալուածոց Հոգաբարձութեան գանձապետ Տիար Համբարձում Մազպուլեանէ բոլոր գոյքերն ու գրութիւնները ըստ մասնաւոր ցուցակի և ապա անմիջապէս կը ձեռնարկէ իր պաշտօնին:

Իր անդամներէն Չինոբ Պէյ Մէրամէթճեան առաջին տարեշրջանը չլրացած կը հրաժարի, իսկ Ատենապետ Տիար Յովհաննէս Էսսեան անձնական տկարութեան պատճառով թէւ քանիցս կը հրաժարի, բայց Ազգ. Կեդր. Վարչութիւնը չընդունիր: Իսկ Տիար Յովհաննէս Էսսեանի ճամբորդութեամբ բացակայութեան ատեն Ազգ. Վարչութիւնը անոր փոխանորդ կ'ընտրէ իր եղբայրը՝ Տիար Մկրտիչ Էսսեան և յետոյ այս վերջնոյն որդին՝ Տիար Վահան Էսսեան և այս ձեւով իր պաշտօնը կը շարունակէ Յանձնաժողովը մինչեւ 14 Մարտ 1897, ուր կը մատուցանէ իր հրաժարականը, որ կրկնէ նաեւ Մարտ 19ին և Ապրիլ 27ին: Որոշմամբ Ազգ. Կեդր. Վարչութեան, Ս. Պատրիարքը 1897 Մայիս 10 թուակիր և 104 թուահամար պաշտօնադրով կը վերահաստատէ Յանձնաժողովը իր պաշտօնին մէջ:

Տիար Կարապետ Չէչեան Մայիս 19ին կը ներկայացնէ իր հրաժարականը և կը քաշուի, որով Տեարք Բարսեղ Հալաճեան և Արտաշէս Մկրեան գրեթէ միաշնակ կը մնան, և այս մասին կը խնդրեն կարգադրութիւն մը (1897 Յունիս 1): Այս դիմումին վրայ 5 Յունիսին Յանձնաժողովը կը վերականգնուի Քաղ. Ժողովին կողմէ, սա կերպով.

Տեարք՝ Բարսեղ Հալաճեան (Ասեմապետ)
Արսաշէս Մկրեան (Ասեմապետ)
Միհրան Մուրաճեան (Գանձապետ)
Տիգրան Թօզաճեան
Վահան Էսսեան
Յարութիւն Սքանգոյունեան

Այս վերջինը մերժած ըլլալով պաշտօն ընդունիլ, Յանձնաժողովս առաջարկով անգամ կ'ընտրուին 1897 Օգոստոս 9ին.

Տեարք՝ Յակոբ Սքանգոյունեան
Միհրան Թընկերեան

Այս Յանձնաժողովը հալիւ 17 Օգոստոս 1897ին կը ձեռնարկէ իր պաշտօնին, Դիւանի ընտրութեամբ:

Տիար Բարսեղ Հալաճեան 1898 Սեպտ. 18ին թէ՛ անդամակցութենէ և թէ՛ Ատենապետութենէ կը հրաժարի, առողջական պատճառներով, և իրեն տեղ Ատենապետ կ'ընտրուի 1898 Հոկտ. 18ին Տիգրան Թօզաճեան:

1903ին Տիար Միհրան Թընկերեան կը քաշուի անդամակցութենէ առանց հրաժարական տալու:

Այսպէս Յանձնաժողովը կը շարունակէ իր պաշտօնը մինչեւ 1903 Մարտ 11, ուր Յանձնաժողովոյ անտուկին վիճակը ներկայացնող հաշուեցուցակի մը հետ կը ներկայացնէ իր հրաժարականը, հնգամեայ շրջանին յօդուրովը պատճառաբանելով :

1903 Մարտ 27 և 731 թուահամար պաշտօնագրով մը Օրմանեան Պատրիարք կը հաղորդէ թէ Քաղ. Ժողովը մերժած է ընդունիլ Յանձնաժողովին հրաժարականը և զայն վերահաստատած է իր պաշտօնին մէջ, անոր վրայ աւելցնելով ժիաջն մէկ հոգի, որով Յանձնաժողովը կ'ստանար սա կազմը.

Տեաւք՝ Տիգրան Թօգասեան (Ասեմապետ)

Վահան Էսսեան

Միհրան Մուրսեան (Դանձապետ)

Արսաշես Մկրեան (Ասեմադպիր)

Կարապետ Խորասանճեան

Յակոբ Սրամպոյրեան

Այս Յանձնաժողովին հնգամեայ շրջանը լրանալէ առաջ՝ Տեաքք Վահան Էսսեան և Կարապետ Խորասանճեան կը հրաժարէին, իսկ Տիար Յակոբ Սրամպոյրեան Եւրոպա հաստատուած ըլլալով կը բացակայէր :

1909ին Յանձնաժողովը ըստ սովորութեան տրամադիր էր իր հրաժարականը ներկայացնելու, երբ Վարչութեան կողմէ կը յորդորուի վերստին հինգ տարուան համար շարունակել իր պաշտօնը, առանց հրաժարականի խնդիր հանելու, նկատի առնելով տիրող կացութիւնը և ազգային ծանր հոգերը : 1911 Հոկտ. 23ին Յանձնաժողովը Վարչութեան առաջարկ կը ներկայացնէ իրեն անդամ տալու հետեւեալ անձնաւորութիւնները.

Տեաւք՝ Յովսէփ Գազազեան

Տիգրան Բարադասեան

Գրիգոր Էփրեմեան

որոնց ընտրութիւնը կը հաստատէ Վարչութիւնը 29 Հոկտ. 1911 և 233 թուահամար պաշտօնագրով : Սակայն Գր. Էփրէմեան կը հրաժարի առողջական պատճառներով և պաշտօն չընդունիր :

Հնգամեայ շրջանին լրանալէն յետոյ, Չերդ Ամենապատուութեան ստորագրութեամբ, 4 Մարտ 1914 թուակիր և 905 համար պաշտօնագրով մը կը ծանուցուի թէ Կեդք. Վարչութեան Քաղ. Ժողովը վերընտրած է Յանձնաժողովս, պաշտօնավարութեան հնգամեայ նոր շրջանով և նախորդ անդամներով :

Այս առթիւ Քաղ. Ժողովը կը մերժէր Բերայի Թաղ. Խորհուրդին կողմէ երկու անդամներու մնալուն անդամակիցի հանգամանքով Յանձնաժողովի մասնակցելու առաջարկը, և կը յանձնարարէր ամէն ջանք թափել ժամ առաջ հատուցանել պարտքերը և ապա կալուածները տրամադրել Թաղ. Խորհուրդին : Նոյնպէս կը յանձնարարէր կանխաւ պիւտճէ ներկայացնել և վաւերացումը ստանալէ յետոյ գործադրութեան դնել :

Այս նոր հնգամեակի միջոցին Ատենապետ Տիար Տիգրան Թօգասեան 1915 Հոկտ. 27ին և անդամ՝ Տիար Տիգրան Բարադասեան 1916 Մայիս 18ին

կը մեռնին՝ Յանձնաժողովս՝ Տիար Թովմէի Գազադեանը կ'ընտրէ Ատենապետ , 1916 Մայիս 20ին , և այս կերպով նոր շրջանը կը բալորուի և Յանձնաժողովը 1919ին՝ նկատի առնելով տիրող չիֆի վիճակը և ընդհանուր պատերազմին հետեւանքով ստեղծուած դժուարին պայմանները , որոնք դեռ վերջ չէին գտած , պահ մը եւս կը շարունակէ իր պաշտօնը , յուսալով թէ բնականոն պայմաններու և խաղաղ վիճակի մը վերահաստատմամբ պիտի կարենար նոր կազմակերպութեան մը յանձնել գործը : Սակայն արտասովոր վիճակին վախճանը տեսնելէ յուսահատ և ի դուր սպասելէ ձանձրացած՝ գտնէ նոր ուժերով իր կազմը զօրացնելու համար 21 Հոկտ. 1921ին կ'առաջարկէ Քաղ. Ժողովին իբր անդամակից իր վրայ աւելցնել

Տեարք՝ Զարեն Խորասունճեանը և
Երուանդ Մարեանը

որոնց հաւանութիւնն ալ առած էր :

Այս առթիւ Յանձնաժողովս պարտք կը համարէր յայտնելու թէ իր պարագրերը հատուցանելու վիճակին մէջ էր իր պահեստի զրամներով և հետեւաբար կ'առաջարկէր Յանձնաժողովին անունը փոխելով «Կաշուածոց Հոգաբարձութիւն Ս. Եկեղեցեաց Բերայի» անունը տալ : Սակայն իր առաջարկը անպատասխանի մնաց և արիկա վստահութեան նուազում նկատելով Յանձնաժողովս ներկայացուց 18 Նոյեմբեր 1921ին իր հրաժարականը :

Կ Ի Ս Մ Ա Կ Ա Ն

Յանձնաժողովս 1893ին պաշտօնի ձեռնարկած ատեն , սա վիճակին մէջ կը գտնէ Բերայի Կալուածոց Մատուկին վիճակը : Նախորդ Կալուածոց Հոգաբարձութիւնը իրբւս գոյք յանձնած է Յանձնաժողովիս՝

Վարձակալներէ պահանջ	Լ. 0.	530.76 ³ / ₄
Թաղ. Խորհուրդէն պահանջ	»	714.37
Զանազաններէ պահանջ	»	64.33
Շիրչիի Գերեզմանատունէն պահանջ	»	205.—
Պատրաստ գրամ , Մատուկը	»	137.80
» » Յ. Մ. Էստեան Դրամատան մօտ	»	3610.75 ¹ / ₂
Գումար	»	5263.02 ¹ / ₄
Իբր անտուկի պարտք ցոյց տուաւ մեզ անտուկոս	»	2000.55 ¹ / ₄
Տակտաւոր	»	14412.90 ¹ / ₂
Ընդամենը	»	16411.45 ³ / ₄

Կալուածներէն նոր Թատրոնը հրկիզեալ և «Արլանտիտ Քաֆէ»ն ալ դեռ նոր շինուելու սկսած ըլլալով , վարձք չէին բերեր , իսկ միւս կալուածները ամբողջ միասին կը բերէին ամսական 181 ոսկւոյ և 20 ¹/₄ զրուշ ընդհանուր վարձք մը :

Ահա սոյն վիճակին մէջ էր Բերայի Կալուածոց Մատուկին Գոյից և Պարտուց վիճակը , երբ Յանձնաժողովս սկսաւ իր պաշտօնավարութեան :

ՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ ՍՈՒՍՆՑԻՑ ԴԱՅԻՒ

Բերայի Պարտուց Հատուցման Յանձնաժողովոյ մատակարարութեան յանձնուած կալուածներուն ամէնէն գլխաւորը Սրբանտիտ Գաֆէն էր, որուն շինութեան մէջ ալ որոշ դեր մը կատարած է Յանձնաժողովս։

Կալուածին շինութեան սկսուած ժամանակ, Յանձնաժողովս դեռ պաշտօնի կոչուած չլլալով, բնաւ մասնակցութիւն ունեցած չէ այն խորհրդակցութեանց մէջ, ուր նախկին Թաղական Խորհուրդը կը նախընտրէր և կ'որոշէր շինութիւնը Սրբանտիտի, նախնական պայմանագրութիւն մը կնքելով ներկայ վարձակալին հետ, և յետոյ վաւերացմամբ և արտօնութեամբ Ազգ. Կեդր. Պատ. Վարչութեան՝ կ'սկսի շինութեան ըստ յատակագծին, որուն ենթադրեալ ծախք ջրոյց կը տրուէր 7000 օսմ. ոսկի։

Ինչպէս նախապէս յիշած ենք արդէն, Յանձնաժողովս իր պաշտօնը կը ստանձնէ սա պայմանաւ որ պիտի չմասնակցի բնաւ շինութեան գործին և միմիայն ծախուց վճարումները պիտի ընէ՝ Թաղ. Խորհրդոյ կողմանէ քաշուած չէքերու փոխարէն։

Սակայն Յանձնաժողովս այս մասին իր հետեւելիք ընթացքը աւելի կանոնաւոր և ազդային օրինաց համաձայն տեսնելու փափաքով, իր ընտրութիւնէն անմիջապէս յետոյ 23 Յունիս 1893ին յատուկ գրութեամբ դիմեց Ազգ. Կեդր. Պատ. Վարչութեան, խնդրելով որ արտօնէ զինքը՝ կալուածին շինութեան համեմատ հետզհետէ վճարք ընելու ապահովագրութենէ առած դրամէն և ի պահանջել հարկին պակասեալ դրամին համար նոր փոխառութիւն կնքելու, վասն զի Յանձնաժողովին ընտրութիւնը և պարտաւորութիւնները ծանուցանող պատրիարքական պաշտօնագրին մէջ նշանակեալ չէին այս կէտերը։

Այս գրութեան ի պատասխանի, Յանձնաժողովս կ'ընդունի 1893 Յուլիս 1 թուական և 743 թուահամար պաշտօնագիր մը, որով կը ծանուցանէր. «Թաղ. Ժողովս, Թաղ. Խորհրդոյ կողմանէ ներկայացեալ յատակագծին համաձայն և Խորհրդոյ Ատենապետ Վսեմ. Ազնաւորեան Յովհաննէս էֆէնտիի կողմէ տրուած մասնաւոր ապահովութեան վրայ, 6500էն մինչև 7000 լիւրայի գումար մը արդէն յատկացուցած ըլլալով այդ շինութեան, այս անգամ արտօնեց Յանձնաժողովոյ այն գումարին չափով պէտք եղած վճարումները ընելու Թաղ. Խորհուրդին, որուն յանձնուած էր շինութեան հոգը, թէ՛ ապահովագրութենէ զանձեալ գումարէն և ուրիշ հասոյթներէն և թէ՛ փոխառութեամբ, պայմանաւ որ սակայն, եթէ այդ ծախքն որոշեալ քանակութիւնն անցնի, զեկուցանէ Ազգ. Վարչութեան»։

Այս երկրորդ պաշտօնագրով Յանձնաժողովիս պաշտօնն ու շինութեան մասին ունեցած մասնակցութեան սահմանը յայտնապէս գծուած ըլլալով, ըստ օրինի, պէտք եղած վճարումները ըրաւ, Թաղ. Խորհրդոյ անդամներէն կազմեալ շինութեան յանձնաժողովոյ կողմէ քաշուած չէքերու և վաւերացեալ շարժական հաշուեցոյցներու համաձայն, իսկ երբ նախատեսեալ և սահմանեալ ծախուց գումարն սպառեցաւ, դադրեցուց իր վճարումները և նկատելով թէ չէնքը գրեթէ կիսաւարտ վիճակի մէջ է, և հարկ անհրաժեշտ է անպատճառ ի դուռն հանել զայն, որպէս զի Թաղային անտուկը աւելի եւս չ'իմաստէի, խնդիրը տեղեկացուց Վարչութեան, անմիջական անօրինու-

թիւն խնդրելով: Ազգային Վարչութիւնը Տնտես. Խորհրդոյ Դիւանին միջոցաւ քննել տալէ յետոյ շէնքին վիճակը, իր 1893 Նոյեմբեր 13 և 857 թ. և 1894 Ապրիլ 12 և 430 թ. կրկին պաշտօնագրերով, շինութեան աւարտման համար նոր վարկերու արտօնութիւն տալով, պաշտօն յանձնեց նաև Յանձնաժողովիս, որ մինչև այն ատեն շինութեան գործին ձեռնամուխ եղած չէր, անկէ յետոյ շինութեան վրայ վերին հսկողութիւն ընէ և գործակցի Թաղ. Պատ. Խորհուրդին: Ըստ սոյն հրամանի Ազգ. Կեդր. Վարչութեան, Յանձնաժողովիս այդ թուականէն միայն սկսաւ գործակցիլ շինութեան համար՝ Թաղ. Խորհրդոյ հետ. ջանալով միշտ զայն աւարտել այն վարկերով զորս վերստին արտօնած էր Ազգ. Վարչութիւնը:

Յանձնաժողովիս նկատելով թէ շէնքը նախատեսեալ ծախքին կրկնով պիտի աւարտի, որպէս զի փոքր ինչ դարմանած ըլլայ այդ վնասը, յաջողեցաւ տարեկան հարւել լիքայի յաւելում մը ընել շէնքին վարձուց գումարին վրայ, որ նախապէս որոշուած էր պայմանագրութեամբ ընդ մէջ Թաղ. Խորհրդոյ և վարձակալին:

Գալով շինութեան ծախքին, անոր համագումարը եղած է 14326 Լ. 0. 9 ³/₄ դրշ. մէջը ըլլալով նախորդ Կալուածոց Հոգաբարձութեան ձեռամբ եղած նախնական շուրջ 280 000-ով. Լիրայի գումարը: Ասոր վրայ պէտք է յաւելուէր նաև 534 ¹/₂ Լ. 0-ի գումարը՝ վճարեալ իրր տուգանք և ծախք փաստաբաններու, մեծ փողոցի վրայ երկու խանութներու պայմանագրութիւնը ջնջելու համար: Հետևաբար Յանձնաժողովիս ձեռամբ շինութեան ամբողջ ծախքն եղած է 14860 ոսկի 59 ³/₄ դրուշ: Այս գումարին դէմ Յանձնաժողովիս իր տրամագրութեան տակ ունէր միայն հրկիզեալ թատրոնին ապահովագրութեան դրամէն մնացորդ 3170 լիրա 49 դրուշի գումար մը և տոկոսէն ու ծախուած նւթեղէններէ ցոյացած 125 Լ. 0. 80 ³/₄ դրշ. որով այս շինութեան ամբողջ րացը 11564 Լ. 0. և 30 դրուշ Յանձնաժողովիս սնտուկն հայթայթեց նոր փոխառութիւններով. թէև այսպիսի մեծ գումարներ գանելու և փոխառութեան մասին Յանձնաժողովիս չատ զփութարութիւն կրեց, բայց աւելորդ չինք համարիր յայտարարելու թէ առանց իր սովորական տոկոսի սակը բարձրացնել ստիպուելու յաջողեցաւ՝ դործն ի կատար հանել:

Սրանտիտի վարձակալին հետ նախնական պայմանագիր մը կնքած էր Թաղ. Խորհուրդը, զիս շինութեան չսկսած, որոյ գլխաւոր կէտերն էին հետեւեալք:

Շէնքը վարձու կը տրուէր շինութեան աւարտումէն սկսեալ ութը տարուան, առաջին հինգ տարիներուն համար վարձքն էր 1450 լիրա տարեկան, իսկ վերջին երեք տարւոյն համար 1500ական լիրա: Յանձնաժողովիս՝ ինչպէս արդէն բացատրեցինք, շէնքը երբ զիս կիսաւարտ էր, ստիպեց վարձակալը գէթ 100 ոսկեոյ յաւելում մը ընելու տարեկան վարձուց վրայ, նկատելով որ Կալուածոց Մատուկը մեծ զոհողութիւն ընելու ստիպուած էր, նախատեսեալ ծախքերու գումարին անբաւական ըլլալուն պատճառով, նաև Սօլ փողոցի մէջ եկեղեցւոյ սեպական մէկ տունը որ յարակից էր Սրբանտիտի, վարձակալին խնդրանքով միացուց մեծ շէնքին, որուն համար 100 ոսկեոյ գումար մը նորէն յաւելում եղաւ տարեկան վարձուց վրայ, երկուս-

տեք համաձայնութեամբ, որով տարեկան վարձքն եղաւ ամբողջ շէնքին համար 1650 լիւրա առաջին հինգ տարիներուն և 1700 լիւրա ալ մնացեալ երեք տարիներուն համար :

Գալով վարձակալին հետ կնքելի վերջնական պայմանագրին, Յանձնաժողովս ի նկատի առնելով անոր մեծ կարեւորութիւնը, մի քանի ուղղային նշանաւոր փաստաբաններու աջակցութեան դիմեց, որպէս զի բոլորովին օրէնքի համաձայն ըլլայ պայմանագիրը : Երկար աշխատութեամբ պայմանագիր մը պատրաստելէ յետոյ, Յանձնաժողովս յղեց անոր պատճէնը առ Ազգ. Կեդր. Վարչութիւն՝ ի վաւերացումն, և 7 Նոյեմբեր 1894 և 522 համալրաւ Պատ. Տեղապահ Հօր պաշտօնագրով վաւերացուցին յետոյ, պայմանագիրը երկուստեք ստորագրուեցաւ և գործադրութեան դրուեցաւ :

Սրբանտիտի վարձակալը պայմանագրութեան առաջին տարուան վարձքը դիւրութեամբ վճարեց, բայց երբ 1895—96ին հայկական ջարդերը և անտեսական տաղնապը սկսաւ, վարձակալը մեծապէս մնասուեցաւ և կարող չեղաւ կանոնաւորապէս վճարել վարձքը : Այս կերպով շուրջ 1200 լիւրայի դուժար մը անվճար մնաց :

Այս տխուր կացութեան վերջ տալու և թաղային մատուկին իրաւունքները պաշտպանելու համար, անխոնջ ջանքեր ըրաւ Յանձնաժողովս, բայց տեսաւ թէ անտեսական տաղնապին մէջ անխոնհմութիւն է օրինական միջոցներով պայմանագրութեան անխեղձ գործադրութիւնը պահանջել, վասն զի օրուան կացութեան բերմամբ ոչ ոք կար պատշաճօր վարձելու այդ կալուածը և եթէ վարձակալը հանուէր, զուցէ բաւական ատեն գոց պիտի մնար շէնքը և աշապիտ բարձր վարձքով կարելի պիտի չըլլար վարձակալ գտնել :

Ուստի Յանձնաժողովս խոհեմութիւն համարեց ընդունիլ վարձակալին առաջարկը որ կը խնդրէր շարաթական վճարումներով թէ՛ նոր վարձքերը վճարել և թէ՛ կարելի եղածին չափ դուժար մըն ալ յետնեալ վարձքերու հաշւոյն տալ : Այս առժամեայ կարգադրութեամբ Յանձնաժողովս յաջողեցաւ նոր վարձքերը իրենց ատենին, իսկ յետնեալ վարձքերն ալ մաս մաս դանձել :

Յանձնաժողովիս ամէնէն մեծ կալուածը՝ Սրբանտիտը այս վիճակին մէջ էր 1898ին, երբ Յանձնաժողովս իր առաջին հնգամեակը կը բոլորէր : Սակայն այս կարեւոր կալուածը յաջորդ չըջաններուն մէջ ստացաւ աւելի մեծ կարեւորութիւն և մանաւանդ ընդարձակութիւն, հետեւեալ պարագաներուն մէջ .

Սրբանտիտի յարակից տան մը սեփականատէրը Էմմանուէլ Վէֆել էֆ. 1904ին առաջարկ կը ներկայացնէ 880 լիւրայի կամ 20000 ֆր. ի 7% տոկոսով փոխառութեան մը փոխարէն, Յանձնաժողովէս ցոյց տրուած անձի մը փոխանցելու Բերա՝ Սրբանտիտի յարակից Վէֆել ընտանեաց սեփական տան $\frac{1}{4}$ մասը վեճաբան փեռադով :

Յանձնաժողովս կ'ընդունի առաջարկը, աչքի առջև ունենալով սոյն կալուածին կարեւորութիւնը և եկեղեցւոյ յարակից հանդամանքը : Այս կալուածին սեփականատիրութիւնը Ա. Երրորդութիւն եկեղեցւոյն և մանաւանդ Սրբանտիտի համար անհրաժեշտութիւն մըն էր և ասոր համար կարելի չէր արհամարհել այս առաջարկը, որ կրնար օր մը սեփականատիրութեան

առաջնորդել, Հետեւաբար ոչ միայն ընդունեց այս առաջարկը, այլ նաեւ յանձն առաւ Վէքիլ էֆէնտիի ուրիշ կալուածներու վարձքերն ալ գանձել, ինչ որ Յանձնաժողովիս կողմէ բացառիկ զսնդութիւն մըն էր:

Այս հիման վրայ կատարուեցաւ փոխանցման գործողութիւնը: 1906ին Վէքիլ էֆ. և իր եղբայրը կը համաձայնին Սրբանտիտի կից Մեծ-Փողոցի վրայի տունը որ սրբ. միւլի ըլլալու մեծ առաւելութիւնն ալ կը ներկայացնէր — վասն զի Եկեղեցիին վաղըֆ կրնար ըլլալ — 14000 լիբայի ծախել:

Ազգ. Կեդր. Վարչութեան հաւանութիւնը ստանալէ յետոյ, Յանձնաժողովս կը յաջողի գնել այս շատ կարեւոր չէնքը և Եկեղեցիին վաղըֆ ընել (1908), հայթայթելով այս գումարը Հետեւեալ փոխառութիւններով.

Մարտիրոս Թօգատեան հաստատութենէն	5 ⁰ / ₁₀ տոկոսով	1. 0.
և 10 տարի պայմանաժամով		2200.—
Զէթունի Հրկիզելոյ Յանձնաժողովէն	5 ⁰ / ₁₀ տոկոսով	
և 5 տարի պայմանաժամով		3000.—
Էմմանուէլ Վէքիլ էֆ.է	3 ⁰ / ₁₀ տոկոսով ի տես վճարելի	2200.—
Նիքոլայի » »	5 ⁰ / ₁₀ » 1907 Յւն. 28ին վճարելի	2000.—
Զանազաններէ		4978.40
		14378.40

Այս գործողութիւնն աւարտելէ յետոյ, Սրբանտիտի յարակից՝ նորասաց կալուածին շահագործման գործը կը զբաղեցնէ Յանձնաժողովս: Սրբանտիտի վարձակալութեան պայմանաժամն ալ լրանալու մօտ ըլլալով, Յանձնաժողովս խորհեցաւ նոր գնուած չէնքերը Սրբանտիտի միացնելով տրամադրել Լւրդակաւն մեծ հաստատութեան մը և այսպէս ապահովել թէ՛ նախորդ և թէ՛ նոր գնուած չէնքերուն շահագործումը: Այս նպատակով դիմումներ կը կատարուին Պան Մարշի, Օրօզի Պաքի և այլ ասոնց նման հիմնարկութեանց, որպէս զի իրենց պէտքերուն համաձայն ձեւափոխութիւններով վարձու տրուի. դժբախտաբար ո և է նպատակաւոր ընդունելութիւն չի գտնել իր դիմումները:

Պահ մը կը խորհուի արարթըմանի վերածել, սակայն ենթադրեալ ծախքը և հաւանական վարձքը նկատի առնելով՝ կը տեսնուի որ Յանձնաժողովս 5⁰/₁₀ հազիւ պիտի կարենար ստանալ:

Յանձնաժողովս այս կալուածին գնմամբ 14000 Լ. 0. նոր պարտքի մը տակ մտած էր և պարտուց քանակը հասած էր 28000 լիբայի, ինչ որ առաւելագոյն չափն էր և երբեք ուրիշ ատեն չէր պատահած: Հետեւաբար Յանձնաժողովս գիտնալով շահդերձ թէ այս կալուածին Սրբանտիտ Բաֆէի հետ խառնուելը ամէնէն շահարիւ կղանակն էր զայն օգտագործելու, կը վարանէր, վասն զի խոշոր ծախք մը կար, և նոր մեծ պարտքի մը պատասխանատուութիւնը առնել չէր ուզիր, վասն զի Յանձնաժողովիս պաշտօնի վրայ գտնուող երեք անդամներէն գանձապետ Տիար Միհրան Մուրատեան անորոշ ժամանակի մը համար Ամիրիկա գացած էր՝ ողբացեալ Յովհաննէս Թաւշանճեանի պաշտութեան պատճառով: Այս բացակայութիւնը 6-7 ամիս

տուեանձ էր, որով ինքը ներկայ չէր կրցած ըլլալ Տիար Մկրտիչ Թօգատլեանի հետ կատարուած բոլոր բանակցութեանց ու պայմանագրութեան կնքման ընթացքին: Ասով հանդերձ Յանձնաժողովիս մնացեալ երկու անդամները՝ ատենապետ Տիար Տիգրան Թօգատեան և ատենադպիր Տիար Արտաշէս Մկրեան, գործը չյետաձգելու համար, բերանացի խօսակցութեան մտան Սրբանոթի վարձակալ Տիար Մկրտիչ Թօգատլեանի հետ և երկար աշխատութիւններէ յետոյ կրցան յանգիլ եզրակացութեան մը: 1908 Փետր. 12/25 թուակիր գրութեամբ մը վերջապէս Տիար Մկրտիչ Թօգատլեան կը ներկայացնէ գրաւոր առաջարկ մը Վէփիներու բնակարանին՝ Սրբանոթի կցման և պանդոկի վերածման համար:

Յանձնաժողովս այս առաջարկը կարգ մը բարեփոխութիւններու ենթարկեց: Ի վերջոյ համաձայնութիւն գոյացաւ հետեւեալ կերպով. —

Վէփիներու բնակարանը և նոյն իսկ Տիար Մկրտիչ Թօգատլեանի սեփական Սօլ փողոցի թիւ 3 և թիւ 3 կրկին երկու տունները պիտի միացուէին Սրբանոթի և պանդոկի պիտի վերածուէին: Շէնքը այնպիսի եղանակով մը պիտի կառուցուէր որ ի պահանջել հարկին դոյզն ծախքով մը կարելի պիտի ըլլար զայն արարթեմանի վերածել:

Սոյն շինութեան յատկացուելիք ծախքերէն փոքր մաս մը՝ այսինքն միայն 8170 ոսկի պիտի վճարէր Յանձնաժողովս, իսկ մնացեալ կարեւոր բաժինը պիտի հայթայթէր Տիար Մկրտիչ Թօգատլեան իր անձնականէն:

Այս առթիւ Տիար Թօգատլեան իր սեփական յիշեալ երկու տունները պիտի նուիրէր Եկեղեցիին և պիտի վճարէր իբր վարձք 2800 օսմ. լիրա, 15 տարուան համար պայմանաւորուելով:

Այս համաձայնութիւնը որ Յանձնաժողովս իր տեսակէտով նպաստաւոր կը գտնէր, ենթարկեց Ազգ. Կեդր. Իշխանութեան հաւանութեան: Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղ. Ժողովը խնդիրը իր բոլոր մանրամասնութեամբքննելու համար ընտրեց Վարչական Մասնաժողով մը որուն անդամ ընտրուեցան՝

Տեարժ. Դաբրիկ Նորսունկեան

Արշակ Դարակոզեան

Յարութիւն Արսլանեան

Մկրտիչ Ասատեան

Վարչ. Մասնաժողովը մի քանի գումարութիւններ ըրաւ Օրմանեան Ս. ի նախագահութեան տակ և Յանձնաժողովիս անդամներուն հետ խառն ու մանրամասն քննելէ յետոյ խնդիրը, զայն գտաւ խիստ նպատաւոր և արտօնեց Յանձնաժողովս գործի ձեռնարկելու:

Ըստ այսմ, Տիար Թօգատլեան կը կնքէ իր ճարտարապետին հետ — որ երաշխաւորուած էր — պայմանագիր մը, որուն անթերի գործադրութեան հսկելու համար Յանձնաժողովիս ճարտարապետը հակալիւ ի գործ դնելու իրաւունք պիտի ունենար: Իսկ Քաղ. Ժողովի կողմէ վարչական վերին հսկող կը կարգուի Վսեմ. Գեղորդ էֆ. Ասլանեան:

Շինութիւնը կ'աւարտի և շէնքը շքեղօրէն կը կառուցուի, Տիար Մկրտիչ Թօգատլեանի արժեկով այս շինութիւնը 30,000 ոսկի, իր նուիրած

երկու տուներուն արժէքն ալ միասին ըլլալով, և առանց հաշուելու Յանձնաժողովիս վճարած 8170 լ. 0. ք:

Տիար Թօղատլեանի ճարտարապետը անկարող կ'ըլլայ իր յանձնառութիւնը կատարելու և այս առթիւ դատաւարութիւն մը կ'սկսի որ ցարդ կը շարունակուի, պատասխանատուութիւնը Տիար Մ. Թօղատլեանի պատկանելու պայմանով և անուանապէս Յանձնաժողովիս անուամբ առաջ կը տարուի:

Այս առթիւ Տիար Մ. Թօղատլեանի կողմէ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն նուիրուած երկու տունները (Սօլ փողոց թիւ 3 և թիւ 3 կրկին) որոնք և ևս ունէին սրտք միւշք ըլլալու առաւելութիւնը, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն աւել խորան իրիսէ վագֆին իմարեի վահիսէով վագֆ եղան:

1912ին նոր կալուածահամարին առթիւ, նոր օրէնքին համաձայն, նկատուելով որ Թօղատլեանի շէնքին իմարեքիյնի մասին համար 12 ⁰/₁₀₀ տուրք վճարել պէտք պիտի ըլլայ, մինչ իմարեի վահիսէի վագֆին տուրքը 4 ⁰/₁₀₀ է միայն, աւելի տուրք չվճարելու կանխահոգութեամբ՝ Յանձնաժողովս կը խորհի յիշեալ իմարեքիյնի վագֆը խորհպաշ ընել և միւլքի վերածելէ յետոյ նորէն Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն իմարեի վահիսէի վագֆ ընել, միօրինակ կերպով 4 ⁰/₁₀₀ տուրք վճարելու համար:

Արդ, այս շէնքը մասամբ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ իմարեի վահիսէի վագֆ և մասամբ ալ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ իմարեքիյնի վագֆ ըլլալով, Յանձնաժողովս կը դիմէ Վարչութեան, և անոր միջոցաւ Ղալաթիոյ ինսամակալութեան, որպէս զի կատարէ զործողութիւնը: Ասիկա սակայն պատճառ կ'ըլլայ որ Ղալաթիոյ ինսամակալութիւնը խնդիր յարուցանէ և իմարե պահանջէ, մինչ յայտնի էր թէ այդ հողը ծախուածնուած ատեն երկու թաղերը միացեալ և Բերայի եկեղեցւոյն սեփական վագֆ չունենալով՝ արձանագրութիւնը Ղալաթիոյ եկեղեցւոյն վագֆին վրայ եղած էր: Ինչ որ կ'ապացուցուէր նոյն եկեղեցւոյն վագֆի տեսարակին մէջ արձանագրուած չըլլալէն: Ինսամակալութիւնը սակայն երբ իրեն գիտում կ'ըլլայ կ'սկսի իմարե պահանջել, ինչ որ երկար բանտկցութեանց և թղթակցութեանց առիթ կու տայ մէկ կողմէ Պատրիարքարանին, ինսամակալութեան և Յանձնաժողովիս միջև, միւս կողմէ Յանձնաժողովին և Էվզաֆի Վարչութեան միջև, որ չենք գիտեր ինչպիսի միջամտիս կ'ըլլայ որ պահանջէր վագֆին իրաւունքը կատարական մէկ նոր կարգադրութեան համաձայն որ բացառիկ վագֆներն ալ Էվզաֆի վարչութեան ենթարկել և հասցիել միայն միւլքիվիլիին տալ կը տրամադրէր: Վերջապէս Ազգ. Իշխանութեանց միջամտութեամբ իրաւախնայութիւն մը կը գոյանայ և Յանձնաժողովս ինսամակալութեան կը վճարէ իմարե: Սակայն 1919 Օգոստոսին նոյն իսկ Սրբանոսի սեպհականատիրութեան յաւակնութիւններ կը տեսնուին ինսամակալութեան մօտ, ինչ որ կը հերքուի և Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն սեփականութիւնը անվիճելի կերպով կը հաստատուի միայն Ղալաթիոյ եկեղեցիին իմարե մը վճարելու պայմանով:

Տիար Մկրտիչ Թօղատլեանի հետ կնքուած 15 տարուան պայմանագրութեան համաձայն, վարձքի քանակը 2800 ոսկի էր, սակայն 1913ին Տիար Մ. Թօղատլեան Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն բակին վրայ նայող երեք

պատուհաններ բանալու արտօնութիւն կ'ուզէ, կանխաւ խոստանալով պայմանագրութեան վերջը դարձեալ չէնք հին վիճակին վերածել:

Այս առթիւ Գանձաժողովը կը յաջողի Տիար Մկրտիչ Թոգատեանը հանձնելու որ 1913 Ապրիլ 1/14էն սկսեալ 200 ոսկիի յաւելում մը ընէ վարձքին վրայ, իսկ 1918 Յունվար 1էն մինչեւ պայմանագրութեան վերջը՝ աշխնքն 1923 Դեկտ. 31, այդ յաւելուածական մասը բարձրացնէ 300 լ. 0. ի:

Սակայն վերջին ընդհ. պատերազմին երբ թղթադրամը իր արժէքը կը կորսնցնէ, Տիար Մ. Թոգատեանի վարձքերուն գանձումը կը յետաձգուի: 1920 Յունուար 1ին այս յետեւալ վարձքերու գումարը 10,055 լ. 0. ի հասած էր, երբ Քաղ. Ժողովոյ կարգադրութեամբ 400 դրուշը մէկ ոսկիի հաշուով գանձուեցաւ 40,220 օսմ. ոսկի, որուն 40,000ը արժամագրուեցաւ Վարչութեան իւր անտոկոս փոխառութիւն:

Հոս Գանձաժողովս իր գլխաւոր կալուածին վրայ կատարուած գործառնութիւնները ներկայացնելէ յետոյ, աւելորդ չի դատեր մէկ երկու խօսք ալ ընել այս կալուածին վարձքին քանակութեան մասին, որ թէպէտ 3100 լիրա ոսկեդրամ նշանակուած է, իսկապէս նշուէն 6000 լիրայէն պակաս չէ, վասն զի պէտք է նկատի առնել թէ Տիար Մկրտիչ Թոգատեանի նուիրած երկու տուներուն արժէքը և այդ երկու տուներն ու վէքիներէ ծախու առնուած տունը, Արլանտիտի միացնելու համար ծախսուած 30,000 ոսկիէն աւելի գումարը, կերպով մը կանխիկ ստացուած վարձք են, որոնք պէտք է բաժնուին պայմանագրութեան 15 տարուան վրայ: Նոյնպէս պէտք է նկատի առնել որ, կիէ պայմանագրութեան սկիզբը Գանձաժողովս ինքը պարտաւորուած ըլլար վճարելու կանխիկ այդ 30,000 օսմ. ոսկին, առնուազն 4-5 % տոկոս վճարելու հարկադրուած պիտի ըլլար, ինչ որ չէ տուած և այդ հաշիւէն ալ շահ մը ըրած է:

Նոյնպէս պէտք է նկատի առնել թէ Տիար Մկրտիչ Թոգատեան զոհողութիւն մը ըրած է՝ ընդունելով Գանձաժողովիս և Ազգ. կեդր. Վարչութեան առաջարկը, պատերազմի միջոցին զիջուած վարձքերը ոսկեդրամով վճարելով, վասն զի ոչ մէկ օրէնք կը հարկադրէր զինքն այս պայմանին:

Նոյնպէս Գանձաժողովս զիտել կու տայ Արլանտիտի պայմանագրութեան մէկ շատ կարեւոր արժամագրութիւնը, որուն համաձայն պայմանագրութեան տեւողութեան կատարուելիք բոլոր նորոգութիւնները կը պատկանին վարձակալին: Գաղտնիք մը տալու համար թէ ի՞նչ կրնան արժել այսքան մեծ ու բազմածախս և շարունակ նոր պահանջներ ու պէտքեր ներկայացնող հիմնարկութեան մը նորոգութիւնները, ըսենք թէ 1920ի ընթացքին Տիար Մ. Թոգատեանի կողմէ կատարուած՝ ոչ այնքան հիմնական նորոգութիւն մը իրեն արժած է 26,000 լ. 0. թղթադրամի ծախք մը, իսկ 1921ի ընթացքին կատարուած նորոգութիւնը արժած է 22,000 լ. 0. և դիտելի է որ այս նորոգութեանց կարեւոր մէկ մասը չէնքին լաւ պահպանման համար եղած է:

Արդ, վերոյիշեալ պարագաները նկատի առնելէ յետոյ է որ միայն կրնայ լնդհանուր և ճշգրիտ գաղափար մը կազմուել Տիար Մ. Թոգատեանի հետ կնքուած պայմանագրի մասին և բոտ այնմ գնահատուի գործը՝ իր ամբողջութեանը մէջ:

Մ Ի Ի Ս Կ Ա Լ Ո Ւ Ա Ֆ Ն Ե Ր Ը

1893ին երբ Յանձնաժողովս պաշտօնի կը ձեռնարկէր, իր մատակարարութեան տակ կը գտնուէին Սրբանոթիւնէն զատ 64 կտոր կալուածներ, որոնց մեծ մասը Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն և մէկ փոքր մասն ալ Բանկալթիի Ազգ. Գերեզմանատան և Ֆէրիզիւղի եկեղեցիին շուրջը: 1893էն մինչև 1921, 28 տարիներու մէջ, կարգ մը փոփոխութիւններ պատահած են: Կարգ մը կալուածներ կցուած են ուրիշներու, մանր մի քանի կալուածներ ծախուած և նորեր աւելցած են: Նոյնպէս Ֆէրիզիւղիի եկեղեցիին կալուածները այս թաղին անջատմամբ տեղւոյն թաղ. Խորհուրդին մատակարարութեան թողուած են, հետեւաբար հասութեաբեր կալուածներուն թիւը 46ի վերածուած է:

Երբ Յանձնաժողովս սկսաւ իր պաշտօնին, այս 64 կտոր կալուածները կը բերէին ամսական 181 ռսկի վարձք: Մեր առաջին ջանքերէն մին եղաւ Կալուածոց Սնտուկին սոյն եկամուտը աւելցնելու աշխատել: Ուստի հետզհետէ պայմանագիրը աւարտած կալուածներու վարձքերը կարելի եղածին չափ աւելցնելու աշխատած ենք:

Ընդհ. Պատերազմի միջոցին երբ կալուածներու վարձքերը մեծ չըջափոխութեան ենթարկուեցան, մասնաւորապէս դրամական սակերու տարբերութեան բերմամբ, Յանձնաժողովս ամէն ջանք ըրաւ, որպէս զի իր խնամքին յանձնուած կալուածներուն ալ վարձքերը բարձրացնէ:

Յանձնաժողովս այդ մասին երբեք թերացած չէ, և ինչպէս արդէն ցոյց տուած էր Քաղ. Ժողովի հրահանգով իր ներկայացուցած ցուցակին մէջ, այսօր Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցիին իր կալուածական հասոյթ կը ստանայ ամիսը մօտաւորապէս 6000 Լ. 0.:

Այս գումարը արդէն ցոյց կու տայ թէ ինչպէս Յանձնաժողովս յաջողած է պարագաները օգտագործել ի նպատակ ազգին, յաջողելով ձեռք բերել ամէն կերպով նշանակելի յաւելումներ:

Յանձնաժողովս աւելորդ կը գտնէ այս կալուածներու ցուցակը, ինչպէս նաև տնոց ամէն մէկէն ստացուած վարձքը ներկայացնել մի առ մի: Նոյնպէս աւելորդ կը համարէ յայտարարել թէ իր մատակարարութեան տակ խնամուած բոլոր կալուածները դրեթէ տնխոտր ապահովագրուած են մայրաքաղաքին մէջ գործող ամէնէն լաւագոյն ընկերութեանց, կարելի եղածին ափ նպաստաւոր պայմաններով:

Արդէն այս մասին կարեւորը տեղեկագրուած էր մի քանի տմիւններ տալով, վարչական հրահանգներու համաձայն պատրաստուած տախտակներու մէջ:

Այս առթիւ աւելորդ չենք համարեր յիշեցնելու թէ թաղային բոլոր կալուածները՝ որոնք Եկեղեցիին շրջափակին մէջ կը գտնուին, բաց ի Տուտու խտար փողոցի կրպակներէն, կը վերաբերին ազգային վազրժներու: Տուտու խտարի կրպակները միայն միւսքեանս վազրժ են:

ՖԷՐԻԳԻԼԻ ԿԱԼՈՒԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԳԻՐԸ

Ինչպէս տեսնուեցաւ Յանձնաժողովի մատակարարութեան յանձնուած կալուածներէն մի քանին հրը, իբր Ֆէրիգիլի սեփական, տեղւոյն Թաղ. Խորհուրդին կը յանձնուէին երբ 1898ին Բերայի Թաղէն Ֆէրիգիլի Թաղը անջատուելով առանձին Թաղական Խորհուրդ կ'ունենար:

Այս առթիւ Ֆէրիգիլի Ս. Վարդան եկեղեցիին սեփական կալուածներու մատակարարութիւնն ալ Բերայի Պարտույ Հատուցման Յանձնաժողովի հսկողութենէն կ'առնուէի և այդ Թաղ. Խորհուրդին կը յանձնուէի: 7 Մարտ 1899ին Յանձնաժողովս կը ներկայացնէ նաև 1898 Օգոստոսէն մինչև Դեկտ. Վերջ այդ կալուածներու մատակարարութեան հաշուեցոյցը: Ֆէրիգիլի Թաղ. Խորհուրդը 1899 Մարտ 28ին կը յայտնէ թէ ընդունած է հաշիւները:

Այս կերպով Յանձնաժողովս զերծ կը կացուցուի Ֆէրիգիլի եկեղեցիին շուրջը գտնուող չորս խանութներու և եկեղեցիին դէմ գտնուող փուռին կէսին մատակարարութենէն:

Սակայն 1909ին Ֆէրիգիլի Թաղական Խորհուրդը Բերայի կալուածներու հասոյթէն 25 ոսկիի ամսական բաժին մը կը պահանջէ սա տրամադրանքէ հետոյ թէ « Բերայի Թաղը հին ժամանակներէ ի վեր իր շրջանին մէջ կը « պարունակէր Ֆէրիգիլը, Նշան Թաշ, Բանկալիի ու Շիշլի Թաղերը, հետեւ « Լարար Բերայի ըլլող կալուածները հասարակաց էին յիշեալ Թաղերուն « քանի որ ամբողջին նուէրով և արդիւնքներով գոյացած էին »:

Պարտույ Հատուցման Յանձնաժողովս 2 Հոկտեմբեր 1909 թուակի բացատրագրով մը պատճառարանելով՝ թէ 1861ին Ֆէրիգիլի եկեղեցին Ֆէթուլլահի նուիրած գետնին վրայ շինուած ատեն 10-15 աղքատ ընտանիքներ դեռ նոր հաստատուած էին հոն, Նշան Թաշի Թաղը 1870ի Բերայի հրդեհէն յետոյ քանի մը տուն հայ բնակչութիւն ունեցած է, և անկէ առաջ ամայի լեռ էր, Շիշլիի մէջ՝ 1882ին՝ այսինքն թրամվէյի շինութենէն յետոյ չէնք շինուած է, մինչ Բերայի կալուածները 1837 թուականէն այսինքն Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շինութենէն մէկ քանի տարի յետոյ շինուած են, կը մերժէ Ֆէրիգիլի Թաղական Խորհուրդին պահանջը: Յանձնաժողովս կը յայտնէր նաև թէ այդ կալուածները բուն Բերացւոց նուէրներով, եկեղեցիին հասոյթներով և Միւթէվէլլիներու բարուք մատակարարութեամբ և փոխառութեամբ ձեռք բերուած են: 1866ին միայն Էրմէնի Քիլիսէ փողով թիւ 2 փայտաշէն տուն մը գնուած է Բերայի Թաղ. Խորհուրդին ձեռամբ: Նոր Թատրոնը 1884ին մասամբ թրամվէյի ընկերութենէն առնուած 200 լիրայով և մնացորդը վարձքերէն վար գրուելու պայմանով՝ ծանօթ անձնաւորութեանց փոխառութեամբը և 1892ի հրդեհէն վերջ՝ Թողատլեան վարձած Սըլանտիտն ալ նորէն փոխառութեամբ շինուած է, ինչպէս որ Վէֆիկներու տան տրուած 14,300 ոսկին զժուար հայթայթուած էր:

Այս բացատրութիւնը տրուելէն յետոյ այս խնդիրը երկար թղթակցութեանց առիթ կ'ըլլայ, վասն զի Ֆէրիգիլի Թաղ. Խորհուրդը նոր առարկութիւններով կը կրկնէ իր պահանջը և Պարտույ Հատուցման Յանձնաժողով կը պարտաւորուի 14 Մարտ 1910ին կրկին բացատրութիւններ տալ:

Այսպէս, Ֆէրիգիւղի Թաղ. Խորհուրդին այն առարկութեան թէ «Ֆէրիգիւղ, Բանկալթի, Շիշլի և Նշան Թաշ արդէն Բերայի բնական մէկ մասը կազմելով, ասոնց վերջերս Բերայէն բաժնուած ըլլալը, ընդհանուրին պատկանող Բերայի կալուածներէն թաղին չօգտուելուն պատճառ չի կրնար ըլլալ», Յանձնաժողովս կը պատասխանէր թէ Բերա և Ղալաթիա երբեմն Միացեալ թաղ կը կազմէին, այնպիսի առնն մը որ Բերա զեռ իր անշէն վիճակով Ղալաթիոյ նպատակն կարօտ կացութեան մը մէջ կը գտնուէր, և ի վերջոյ դատուեցաւ, թաց Բերա իր կարօտութիւնը մէջ բերելով նպատակ չխնդրեց անկէ: Նոյնպէս Բերա և Գասթափաշա երբեմն միացան. Գասթափաշա ի վերջոյ անջատ հոշակեց ինքզինքը, թաց երբեք նպատակ չխնդրեց Բերայէն, թէև անոր կարօտութիւնը ծանօթ էր: Ֆէրիգիւղի Թաղ. Խորհուրդը Բերայէն անջատուելէն տասը տարի ետք, իրեւ թէ սթափելով, իր բաժնուելի պատճառ չի նկատեր Բերայի կալուածներէն չօգտուելու: Ասկէ առաջ ալ քանի մը անգամ Ֆէրիգիւղ բաժնուած է, ասանց ասանկ պահանջ մը ներկայացնելու:

Վերջապէս Ազգ. Կեդր. Վարչութիւնը, որ երկու կողմին ալ պատճառարանութիւնները լսած էր, ի վերջոյ կ'ընդունի Բերայի Պարտուց Հատուցման Եանձնաժողովի տեսակէտը, որով այս անհաճոյ միջազգայն կը փակուի:

ԲԱՆԿԱԼԹԻ ԳԵՐԵԳՈՐԱՆՍՏԻՆ


Ինչպէս յայտնի է, Բանկալթիի գերեզմանատան մէջ 1865էն ի վեր դադրած է նմանեցեալներ թաղուելը: Այս թուականէն առդին գերեզմանատան դիւրքը, չրջակայ օտար գերեզմանատուներու ենթարկուած վիճակը, նաև այս սրբավայրին վրայ փորձուած ոտնձգութիւնք մասնաւոր կարեւորութիւն մը տուած են այս գերեզմանատան, որ իր այսօրուան վիճակին մէջ կը ներկայացնէ ազգային խոշոր հարստութիւն մը և որ օր մը թերեւս կարելի պիտի ըլլայ օգտագործել յօգուտ Ազգին:

Գերեզմանատան դիւրքը, անոր՝ Բերայի մեծ պողոտային վրայ դրաւած ընդարձակ երկարութիւնը, օգտագործելու ջանքեր հնուց ի վեր եղած, սակայն միշտ դժուարութիւններու հանդիպած են: 1866ին անոր հարուստային ծայրը կասեցուցած է մասուռ մը և անոր մօտ չիմուած են մի քանի փոքր խանութներ, միշտ սպասելով լուսազոյն օրերու, ուր կարելի պիտի ըլլար օգտագործել այս գետնին զոնէ Բերայի պողոտային վրայ նայող երեսը, հաստեթարեր կալուածներ չինելով:

Յանձնաժողովս հետեւաբար այս տեսակէտով միշտ շահագրգռուած է Բանկալթիի գերեզմանատունով և միշտ զայն պահպանելու համար իր ջանքերն ու աշխատութիւնները չէ զլացած երբեք: Այսպէս, իր կողմէն վճարուած են 1897ին գերեզմանատան դուռներու փակման և որմնց չինութեան համար 22,153 ³/₄ ի գումարը:

Մասնաւորապէս Համբոտեան ընթիմին վերջերք՝ պատահած հրդեհ մը, հակառակ մեր կամքին, մտատանջութեան առարկայ կը դարձնէր այս գերեզմանատունը:

26 Մարտ 1907ի գիշերը Բանկալթիի գերեզմանատան յարակից



խանութներէն՝ Կաղանէ փողոց Անասիսան Թովմա Օղլուի վարձած թիւ 10 սրճարանէն հրդեհ ծագելով նոյն խանութը և երկու կողմէն ուրիշ 7 խանութ՝ մինչև գերեզմանատան դուռ՝ հոյս ճարակ կ'զած են։ Այս խանութները ապահովագրուած էին 10,350 ֆրանքի, ինչպէս նաև դուռը և քովի խանութը — որոնք մասամբ վնասուած են — 1150 ֆրանքի։

Յանձնաժողովս չղրկուելու համար անոնց եկամուտէն, բնական է թէ անոնց վերաշինութեան հետամուտ պիտի ըլլար։ Սակայն կառավարութեան կողմէ ուղղակի և անուղղակի արգելքներու կը հանդիպէր։

Այ միայն Քաղաքապետութիւնն արդելք կ'ըլլար վերաշինութեան, այլ նաև ստորիկանութիւնն ալ զանազան զօւարտութիւններ կը յարուցանէր վարձու բռնիք ուզող Հայերու դէմ, և անոնք կը վախնային, իսկ հին վարձակալները չէին ուզեր ամսական վճարել, ուստի Յանձնաժողովը դիմումներ կ'ընէ թէ՛ այս միջամտութիւնը վերցնելու և թէ խանութները վերաշինելու հրաման ստանալու համար։ Այս մասին երկար աշխատութիւններ կը տրուին որոնք չեն կրնար արգելադրուել։ 1908 Յուլիս 23ի Օսմ. Սահմանադրութեան վերահաստատութիւնէն յետոյ, երբ համամատարար տրամադրութիւնները նպաստաւոր ըլլալ կը թուէին, 1910 Փետր. 17ին Թաղապետութիւնը կ'ազդարարէ Գերեզմանատան պատը նորոգել։ Յանձնաժողովը կ'որոշէ առիթը օգտագործել, գտնուած հին խանութները նորոգելու և ուրիշ 17 հատ նոր խանութներ աւելցնելու հրաման խնդրելով։ Այս արտօնութիւնը կը արուի և Յանձնաժողովը գործի կը ձեռնարկէ, սակայն 5 Ապրիլ 1910 թուականով արգելք կը դրուի և զազարման պատճառաւ մը կը հասնի։ Քիչ յետոյ (1910 Յուլիս 15) Քաղաքապետութիւնը կը պահանջէ 15 մէթր հա լայնի գերեզմանատան պատը և այդ պարագային միայն կը համաձայնի արտօնել փյուռած խանութներուն նորոգ չինութիւնն՝ ըստ որոշեալ յատակագծին։

Այս խնդիրը երկար հաղորդակցութիւններու առարկայ կ'ըլլայ Յանձնաժողովին, Թաղ. Խորհուրդին և Ազգ. Կեդր. Վարչութեան միջև, և Թաղապետութեան ու Կառավարութեան հետ երկար բանակցութիւններ կը կատարուին։ 1911 Սեպտ ին նորէն կ'արձարծուի այս խնդիրը և 1912 Ապրիլին բարեյաջող վախճանի մը կը հասնի, կառավարութիւնէն առնուելով 15,000 լիրա, որուն 9000ը կը տրամադրուի Յանձնաժողովիս, գործածուելու համար շրջապատին և Տօլապուէթի և Բանկայթիի վարժարաններու վերաշինութեան և 6000 լիրան կը յատկանայ Պատրիարքարանի վերաշինութեան։ 1913 Սեպտ. Յանձնաժողովը կ'ստանայ գերեզմանատան շուրջի քաջքայեալ շէնքերուն վերաշինութեան արտօնութիւնը, Պետական Խորհուրդին խողովակով։

Այս կարեւոր աշխատութեան համար, Յանձնաժողովս պարտք կը համարէ իր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնել Յանձնաժողովիս գանձապետ Տիար Սիճրան Մուրադեանի, որ այն առթիւ եղած արտակարգ ծախքերն իր անձականէն հողացած է։

Այս արտօնութիւնէն առանց սակայն ըստ կարելոյն օգտուելու, Ընդհ. Պատերազմը սկսաւ և Հայ Ազգը ենթարկուեցաւ ծանր և անդարձանելի հարուածներու։ Այդ շրջանին մէջ կարելի չէր նոր շէնքերու շինութիւնը և Գերեզմանատան պահպանութիւնը մեծ յաջողութիւն մը պիտի ըլլար, վասն զի Իթիթիհատական կառավարութիւնը, ինչպէս շատ մը ազգային անդունդարեղի սեփականութիւններ ապօրէն կերպով իւրացուցած էր, նոյնպէս նաև

կրնար գրաւել Բանկայթիի Ազգային Գերեզմանատունը, ամէն օրէնք ոտնա-
հարելով և բռնաբարելով :

Բարերախտաբար այս տեսակ ոտնազուլթիւն մը չփորձուեցաւ մինչեւ
Զինադադար, որուն կնքուելէն տարի մը յետոյ, 1919 Դեկտեմբերին, Քօլօնէլ
Պինձ՝ Յանձնաժողովիս առաջարկ կը ներկայացնէ իրեն վարձու տալ 3-5
տարի պայմանաժամով, Բանկայթիի Գերեզմանատան տախտախորմով զատ-
ուած դեպքէն 40-50 մէթր ճակատով և 15 մէթր խորութեամբ մաս մը
հող, վրան իր ծախքով «խնայարժ» կառած մը շինելու համար, խնդրելով
որ հաւանոր դին մը պահանջուի :

Յանձնաժողովս 1919 Դեկտ. 14ին դիմեց Ազգ. Կեդր. Վարչութեան
և ներխայտանելով Գնդ. Պինձի առաջարկը ուղեց իմանալ Վարչութեան
կարծիքը թէ սկզբունքով կարելի՞ էր այս տեսակ առաջարկի մը համար
բանակցութեան մտնել :

Գող. Ժողովը 1919 Դեկտեմ. 26 թուակիր պաշտօնագրով մը սկըզ-
բունքով կ'ընդունի և կ'արտօնէ Յանձնաժողովս բանակցութեան մտնելու :

Յանձնաժողովս՝ Վարչութեան արտօնութեան վրայ հիմնուած, բանակ-
ցութեան կը մտնէ Գնդ. Պինձի հետ, որ իրր անդամ «Edwards & Sons»
ընկերութեան, անոր անունով կը գործէր : Վարձքին և պայմաններուն
համար երկար բանակցութիւններէ յետոյ, Յունվար 26ին համաձայնութիւնը
կը գոյանայ, անդէ. այդ տան տրամադրելու համար իր առաջարկած տարա-
ծութեամբ գետին մը, ուր ընկերութիւնը պիտի կառուցանէր կառած մը,
որուն շէնքը Ազգին պիտի մնար 10 տարի յետոյ :

«Edwards & Sons» ընկերութիւնը իր վարձք պիտի վճարէր գետինն
համար 1500 Լ. 0. տարեկան :

Այս կառածին շինութիւնէն անմիջապէս յետոյ ուրիշ խնդրարկուներ
ներկայացան և այս շէնքին քով զանուած գետինն վրայ շէնքեր շինելու
առաջարկ ներկայացուցին զանազան պայմաններով : Յանձնաժողովս ասոնց
մէջ ընտրութիւն ըրաւ և ամէնէն նպաստաւորները ընդունեց :

Ասոնցմէ մէկն էր 1920 Յունիսին ներկայացուած Ամերիկեան Փօրէյն
Թրէյտ Բորթօքէշըն մնծ ընկերութեան առաջարկը, որ կ'ուզէր վարձու բռնել
27 մէթր երեսով և 25 մէթր խորութեամբ 675 մէթր տեղ մը, հոն իր կար-
գին երկրորդ կառած մը շինելու համար :

Ընկերութիւնը յանձն կ'առնէր տարեկան 3000 Լ. 0. վարձք տալ և
եօթր տարի յետոյ իր կառուցած մօտաւորապէս 30,000 Լ. 0. արժէքով
շէնքը թողուլ Ազգին :

Իսկ երկրորդն էր նոյն օրերուն, այսինքն դարձեալ 1920 Յունիսին,
կրկին Դօլօնէլ Պինձի կողմէ ներկայացուած առաջարկը, որով կ'ուզէր վար-
ձել առաջին կառածին համար ընդունուած պայմաններով, 20 մէթր ճակա-
տով և 25 մէթր խորութեամբ մաս մը գետին եւս, առաջին կառածին կից,
2500 Լ. 0. տարեկան վարձքով, որոշ ժամանակամիջոցէ մը յետոյ նոր
կառած մը շինելու պայմանով :

Այս երկու պայմանագրութիւններն ալ Յանձնաժողովս երկար
բանակցութիւններէ և մանրակրկիտ քննութիւններէ յետոյ ընդունած և

վաւերացուցած է, միշտ զանոնք ենթարկելով Ազգ. Կեդր. Վարչութեան հաւանութեան:

Այս պայմանագրութեանց իրր արդիւնք՝ Բանկայթիի Գերեզմանատան գեանին վրայ կառուցուեցաւ երկու խիստ հասութարեր կալուածներ, որոնց թիւը կարելի է հեաղհեաէ շատցնել, բարեկաջող պայմաններէ օգտուելով:

Բանկայթիի Գերեզմանատունը հիմա կը ծառայէ նաև, Ազգ. Կեդր. Վարչութեան արտօնութեամբ, իրր մարդայան Հ. Մ. Լ. Միութեան և անդլիացի զինուորականներու: Ֆրանսացիք երկար բանակցութիւններէ յետոյ 1921 Յունիսին արտօնութիւն ձեռք բերին ճամբայ մը բանալու Գերեզմանատան մէջէն դէպ ի իրենց հիւանդանոցը, յատուկ պայմանագրութեամբ որ խմբագրուած է Քաղ. Ժողովին կողմէ, ըստ Ազգ. Ժողովի որոշման:

ԵՐԷՈՒ ԱՆԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԿՑԱԼԸ

7 Յունիս 1903ին՝ 1047 թիւ պաշտօնագրով մը Օրմանեան Պատրիարք կը հաղորդէր թէ բարեաէր անձ մը իր անձնական սեփականութենէն 3000 օսմ. ոսկիի նուէր մը ընել կը փափաքի Բերայի եկեղեցիին, պայմանաւ որ եկեղեցւոյն չըջափակին յարակից հրկիզեալ շէնքին գեանին մէկ մասին վրայ, շէնք մը կառուցուի և տարուէ տարի 3000 Փրանք տրուի մինչև իր քրոջը մահը, սակայն դադրի այս հատուցումը 12 տարին լրանալէն յետոյ, եթէ նոյնիսկ տակաւին ողջ ըլլան այս երկուքը կամ երկուքէն մին:

Օրմանեան Ս. միւնեոյն ասին կը հաղորդէր Սառն Ժողովի որոշումը որուն համեմատ կը հրամայուէր Յանձնաժողովիս, նուիրատուին շէնքին հետ միացեալ գեանին վրայ շէնք մը եւս կառուցանել իրբու կալուած:

18 Յունիս 1903ին Յանձնաժողովս ընդարձակ տեղեկագրով մը կը ներկայացնէ այս առաջարկին մասին իր կատարած ուսումնասիրութեան արդիւնքը, որով նպաստաւոր չէր գտներ այդ շինութիւնը: Հետեւաբար պահ մը կը յետաձգուի նուիրատուութեան իրադործումը: Վերջապէս 1/14 Յուլիս 1905ին նախնական համաձայնութիւն մը կը գոյանայ, որով նուիրատուք Ազգին կը նուիրէին երեք հազար (3000) օսմ. լիբա, ազգին մէկ պէտքը լրացնելու ծառայող անհասութարեր կալուածի մը յատկացուելու համար, սակայն մինչև 1910ի վերջերը կարելի չըլլար գործադրել, վասն զի կիրառութեան յարմարադոյն պարագայ մը ներկայացած չէր: Այս տեսակ առիթ մը երբ կը ներկայանայ, Յանձնաժողովս նուիրատուներու փոխանորդներուն հետ կը բանակցի և 1910 Դեկտեմբեր 8ին կը յաջողի անոնց հաւանութեամբ գնել Բերայի Քեթիկայ Մուսթաֆա Ձէլէպի թաղը, Չըքմազ Միւճափէլէ և Քույու և Քէօմիւրճի փողոցներու վրայ, 13 և 6 և 7 թիւերով և Մաննի ընտանիքի ստացուածքը և Տիար Օննիկ Գարակեօղեանի վրայ գրուեղող 1511 կանգուն և 11 մաս տարածութեամբ հողն ու մէջի շէնքերը, պայմանաւ որ այդ հողն ու շէնքերը խառնուին անոնց կից եղող Ս. Յարութիւն եկեղեցւոյն և Էսսեան Վարժարանի գեանին և ծառային իրր յաւելուածական շէնք ու պարտէզ նոյն վարժարանին, հոն փոխադրելու համար թաղային մանկապարտէզը, ապագային Քէօմիւրճի փողոցի մասին վրայ հասութարեր շէնք մը շինելու իրաւունքով:

Նուիրատուները այս նոր ստացուածքին ամբողջական գինն ու ծախքը եղող 4170 օսմ. լիրայի դաճարը ամբողջացնելու համար, իրենց արդէն իսկ նուիրած 3000 ոսկիէն դատ՝ իրր բացարձակ և անդարձ նուէր՝ յօժարութեամբ նուիրեցին 1170 ոսկի։ Միեւնոյն պայմաններով Յանձնաժողովս պարտաւորութիւն ստանձնեց Բերայի Ս. Յարութիւն եկեղեցւոյն յարակից նոր ստացուած մասին յիշյ արձանագրութիւն մը ղեակդել, եթէ նուիրատուներու կողմէ փափաք յայտնուի։ Այս առթիւ յաւելուածական տրամադրութիւններ կ'աւելցուին, որով ի նպաստ նուիրատուներուն տարեկան 1100 ֆրանքի յաւելում մը կ'ըլլար։ Յանձնաժողովս վերոյիշեալ հողին ու մէջի շէնքերուն փոխանցման գործողութիւնները կը կատարէ և Տիկին Վասիլուհի Գարակէօզեանի անուան արձանագրել կու տայ, անկէ առնելով օրինական մուվազաայի սկիւնք։

Յանձնաժողովս որ այս փոխանցումը առժամայէս կատարած էր, կը ձեռնարկէ մուզաքաաի վերածելու, իրր դպրոց տուրքէ զերծ կացուցանելու համար և վերջապէս կը յաջողի 1912-13 տարիներուն երկար աշխատութիւններով իրագործել այս գործը։

Յանձնաժողովս 1911ին կը յաջողի այս շէնքին յարակից 450 կանգուն հողը եւս գնել, 1900 ոսկիի, դարձեալ Մաննի ընտանիքէն և փոխանցել դարձեալ Տիկին Վասիլուհի Գարակէօզեանի անուան, օրինական մուվազաայի սկիւնքով։ Այս առթիւ, միջնորդ անձնաւորութեանց ջանքերով, 1230 Լ. 0.ի յաւելուածական նուիրատուութիւն մը եւս կ'ըլլայ, որով անանուն բարերարին թոյանդակ նուիրատուութիւնը կը յանգի 5400 Լ. 0.ի և Յանձնաժողովս պատրաստակամութիւն կը յայտնէ տարեկան 5400 ֆր. վճարել նուիրատուներուն, իրր սովոր։

Բիշ յետոյ նոր բանակցութիւններ կը կատարուին և Յանձնաժողովս պաշտօնապէս կը յայտնուի թէ նուիրատուներէն մէկը 1913ի սկիզբը վախճանած և միւսն ալ իր կեանքին 77 տարին թեւակոխած է։ Ուստի հաճութեամբ նուիրատուին՝ կը փոխուին պայմանները և 1905ի ու 1911ի նուիրատուութեանց առթիւ կազմուած պաշտօնագիրները քնջուած կը համարուին և 4170 ոսկիի նուէրը անպայման կը ձգուի Յանձնաժողովին։ Իսկ վերջէն տրուած 1230 ոսկի դուծարն ալ իրր հիմ կը բռնուի կենսաթոշակի մը (rente viagère) որ 5000 ֆրանք պիտի ըլլար տարին՝ վեցամսեայ վճարումներով։

Այս կերպով Բերա Մանկապարտէզի յատուկ շէնք մը կ'ունենար և ասոր փոխարէն Յանձնաժողովս յաւձն կ'առնէր Ս. Երրորդութեան կից, Բիլիսէ փողոցի խանութներուն վրայ, նուիրատուներու փափաքին համեմատ յառաջիկային կառուցանել կեդր. վարժարանի շէնք մը և այսպէս յաւերժացնել այժմ հանգուցեալ երկու համեստ ու միշտ ծածկուած մնալ ուղող բարերարներուն անուաները, զորս հիմա պատմութեան յանձնելու չի վարանիր Յանձնաժողովս, երբ ոչ եւս են։ Այս երկու բարերարներն էին ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՓԱՓԱՂԵԱՆ և իր քոյր ԾՐ. ԷԼՊԻՍ ՓԱՓԱՂԵԱՆ։ Սոյն շատ կարեւոր նուիրատուութեան համար Յանձնաժողովս պարտք կը համարէ երախտագրութեամբ յիշատակել անունը հանգուցեալ Օրմանեան Արքեպիսկոպոսի, որ թէ՛ իր Պատրիարքութեան շրջանին մէջ և թէ վերջը, այնքան եռանդով աշխա-

տած է: Նոյնպէս այս գործին յաջողութեան մէջ մեծ դեր կատարած են Գարրիէլ Էֆ. Նորասուենկեան, ողորացեալ Տիար Մկրտիչ Էսահեան և Յանձնաժողովի անդամներէն Տիար Միհրան Մուրատեան:

ԳՆՈՒԱԾ ԵՒ ԾԱՆՈՒԱԾ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Յանձնաժողովս իր պաշտօնավարութեան շրջանին, ինչպէս տեսնուեցաւ, յաջողած էր Սբաւոտի տէր շէնքը մերձակայ կալուածներու ստացմամբ և միացմամբ, մեծապէս ընդարձակել Բանկալթիի երկու կառածները իբր հասութեան կալուած աւելցնել, Էսահեան վարժարանի քով յատուկ մանկապարտէզի շէնք մը ծախու առնել և այս կերպով օգտակար ծառայութիւն մը մատուցանել թաղին:

Սակայն ասոնցմէ զատ Յանձնաժողովս յաջողած է ձեռք բերել նաև կարգ մը ուրիշ շէնքեր, թէ՛ թաղին Բարձրագոյնութիւնները լրացնելու և թէ՛ անոր հասոյթներն աւելցնելու նպատակով: Ասոնցմէ ոմանք նուէր և այլք հասոյթներու առաւելութեամբ ծախու առնուած են:

Ասոնցմէ ամէնէն կարեւորն է Բանկալթիի գալոցին շէնքը որ ծախու առնուած է 1919 Սեպտեմբերին 4500 Լ. Օ.ի: Այս շէնքը որ կը գտնուի Բանկալթի ճէտիտի փողոց, արդէն կը գործածուէր վարձքով իբր գալոց և իբր այն թաղային անհրաժեշտութիւն մը կը ներկայացնէր:

Նոյնպէս Յանձնաժողովս 1920ին ծախու առաւ Բանկալթիի Գերեզմանատան կից կաղնիօի շէնքը, 1100 ոսկիի փոխարէն:

Այս շարքին մէջ կարեւոր տեղ մը գրաւելու կոչուած էր նաև ազգաւ յոյն Բերայի բնակիչներէն Տիկին Մարի (ղուսոր Եանիի) Պօնարի այն պատրաստակամութիւնը որ ունեցած էր 1907ին իր 6000 լիրա արժէքով և իրեն սեփական Բերա Թէրէ Պաշը, Մէզարլըք ճատտէսի 7 և 9 թիւ և 500 կանգուն գետնի վրայ կառուցուած արարթըմանին 320 կանգուն սրբօ միւլ մասը — որուն մնացորդը Սուլթան Մահմուտ Խանը Սանիի վազֆէն է — Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն վազֆ ընելու համար Շէրիի օրէնքով, մանչ գաւակ չունենալուն պատճառաւ:

Նոր օրէնքի մը համաձայն՝ մահիլը մնալու դրութիւնը ջնջուած ըլլալով, թէ և այսօր իր նշանակութիւնը կորուսած է այս նուէրը և միայն ինքեմ մը տպահովելէ զատ ոչ մէկ օգուտ կը ներկայացնէ, սակայն այն ատեն մեծ նշանակութիւն ունէր, մանաւանդ կալուածին արժէքին համար և ասուր համար Յանձնաժողովը կարեւորութիւն կ'ընծայէ:

Յանձնաժողովս նախ կ'ընչ յայն ըլլալը նկատի առնելով կը վարանի, սակայն տրուած բացատրութեանց և տպահովութեանց վրայ սկզբամբ ընդունելի կը նկատէ այս առաջարկութիւնը և կը պատրաստէ վագֆիկն, և վագֆը հաստատելու տայ փերիանկէն: Այս առթիւ կ'ըլլայ միայն 105 լիրա ծախք մը, որ կը նշանակուի 5% տոկոսով պահանջ, յառաջիկային վագֆին հասոյթներով հաշուակցելու համար:

Յանձնաժողովս այս նոր գնումներուն հետ, երբեմն ալ քիչ հասութեան և անհաստատ ու օրինապէս վաճառուած կարծած կալուածներէն մէկ քանին վաճառելով, զանոնք փրկած է կամ անոնց փոխարէքը աւելի շատ հասոյթ

բերող կալուածներու դնման յատկացուցած է: Այսպէս, իր պաշտօնավարութեան ընթացքին ծախած է Սկիւտար՝ երկու տուներ:

1864 թուականին Սկիւտարցի Տաղլը Բակըր ազա Մարտիրոսեան 12000 դրշ. առնելով Բերայի Թաղ. Խորհուրդէն Սկիւտար Պաղլար Պաշրի կողմը Եէնի Մանալէ փողոց թիւ 275 և անոր կից Նուհ Գուլուար փողոց թիւ 132 փայտաշէն տուները Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն կաւ տայ, ցիւանս իրեն և իր քրոջ հոն բնակելու և իր երկու քոյրերուն թաղային անտուկէն՝ ցիւանս ամսական քսանական դրշ. նպաստ ստանալու պայմանաւ:

1909ին այս կտակէն օգտուողներն ամենքն ալ վախճանած ըլլալով, և այս տուները վազճի ըլլալով, Յանձնաժողովս Ազգ. Կեդր. Վարչութեան հաւանութեամբ կը վաճառէ դեռեւս 225 օսմ. լիրայի:

Այս կարգին աւելորդ չլլայ թերեւս դիտել տալ թէ արձանագրութեանց սրբապաշտեան (քանիքի զայսի) օրէնքին հրատարակութենէն առաջ Յանձնաժողովս բաւական կարեւոր դրաղութներէն մէկն ալ եղած է Բերայի Եկեղեցիին կալուածներուն ապահովութեան հարցը և բարեյական անունի (նամը միւրսիկնար) զրայ գտնուած կալուածներու պատուաւոր անհատներու անուան փոխանցումը, ապահովագրներու (մուլագաւա) ստացմամբ, և կարգ մը երբեմն անհատներու անուան արձանագրուած կալուածներու ալ մասանդորդներէն ուրիշ անձերու զրայ փոխանցումը: Իսկ օրէնքին հրատարակութենէն յետոյ աշխատուած է այն կալուածները որ Եկեղեցիին վազճի չէին Ս. Երրորդութեան Եկեղեցիի անուան արձանագրել. սակայն կարգ մը պատճառներով, դեռ մի քանի կալուածներու համար ձեռնարկուած գործադրութիւնը, չին աւարտած:

Ի Ե Ն Է Ճ Ե Ա Ն Կ Տ Ա Կ

Տիկին Մարիամ Իյնէճեան Յանձնաժողովիս անտուկին յանձնած էր 1000 օսմ. լիրայի գումար մը իբր փոխառուութիւն:

1894ին յիշեալ Տիկինը դիմում կ'ընէ. տոկոսի սակը 4⁰/₁₀ էն 8⁰/₁₀ է բարձրացնելու, խոստանալով Ազգին կտակել Նոյն գումարը: Յանձնաժողովս կը յորդորէ զինքը որ անմիջապէս զործադրէ իր ստանալաւթիւնը և կը յաջողի Տիկին Մ. Իյնէճեանը համոզելու որ 500 տոկի վազճի ընէ ազգային բարեկալստակ հաստատութեանց, պայմանաւ որ մինչեւ զմահ 1000 տոկի գումարին զրայ 7⁰/₁₀ տոկոս ստանայ Բերայի Կալուածոց անտուկէն: Ուստի անմիջապէս կը կազմէ Մանիեմեի շէրիի միջոցաւ վազրճեմակ մը, որով 500 լիրա վազճի կ'ըլլար Ազգին, յանուն Միւթէվէլլիի Տիար Յովհաննէս Էստեանի, պայմանաւ որ այդ գումարին չաճէն ամէն տարի երեք օսմ. լիրա աղքատաց բաժնուէր և մնայեալը յատկանար իրեն, և յետ իր մահուան, այս զրամադլիւն՝ Միւթէվէլլիի ձեռամբ գոյանայիք արդիւնքին կէսը Բերայի վարժարանին աղքատիկ մանկանց և միւս կէսը՝ Եէֆի Գուլէի Ազգ. Հիւանդանոցին վարժարանի մանկանց բաժնուէր: Այս պայմաններով Տիար Յովհաննէս Էստեան այս գումարն ստանալէ յետոյ Տիկին Մ. Իյնէճեանէ՝ կը յանձնէր թաղին Կալուածոց անտուկին, շահագործման համար: Սոյն կարգադրութեանց վերջանալէն երկու տարի յետոյ Տիկին Մարիամ Իյնէճեան կը մեռնի (1896

Յունվար 28) և ժառանգորդները խնդիր կը յարուցանեն և կը պահանջեն Պէյր-իւշ-մալի միջոցաւ 1000 ոսկի, ըսելով թէ անիկա այդ գումարը աւանդ ձգած էր կալուածոց անտուկին :

Յանձնաժողովս երկար բանակցութիւններէ յետոյ, որոնք մօտաւորապէս տարի ու կէս կը տևեն, Պատրիարքարանի հաճութեամբ և կարգադրութեամբ իրաւախօնութեան մը կու գայ և կտակեալ 500 Լ. Օ.ր անեղծ պահել կը յաջողի և մնացեալ գումարը, վճարուած 96 ոսկի տոկոսը զեղչելէ յետոյ, ժառանգորդներուն կը վճարէ մասնավճարներով : Յիշեալ 500 Լ. Օ.ր կը մնայ դեռ Յանձնաժողովիս քով 3 1/2 տոկոսով և ամէն տարի կանոնաւորապէս ըստ կտակի տրամադրութեան տոկոսը կը բաժնուի Բերայի Թաղ, Ոորհուրդին և Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան միջեւ :

ՄԻՀՐԱՆ ԻՆՃԷԿՏԱՆ ԿՏԱԿ

Նիս բնակող Տիար Միհրան Ինճէեան — նախկին խորհրդական և Տնօրէն Գատական Գործոց Արեւելեան Երկաթուղեաց Ընկերութեան — 1911 Օգոստոս 18/31 թուակիր կտակագրով մը կը նուիրէր իր սեփական կալուածներն ազգին, և որովհետեւ Օսմանեան կալուածական օրէնքներու համաձայն այն ատեն հարելի չէր ուղղակի փոխանցել Ազգ. Պատրիարքարանի կամ բարեգործական հաստատութեան մը, Կ. Պոլսոյ Ազգ. Կեդր. Վարչութեան հաւանութեամբ և մինչև իր մահը կերակրուելու և ինամուելու պայմանով (վեֆարընա տէկին պէպէսիք շարքը իյե) փոխանցած էր Գարբիէլ Էֆ. Նորատունկեանի և Յանձնաժողովիս Գանձապետ Տիար Միհրան Մուրատեանի անուններուն :

Այդ կալուածները որոնք այն ատեն գնահատուած էին ոսկեդրամով 12,000 Լ. Օսմ. կը բաղկանային հետևեալներէն .

1. Բերա, Մեծ Փողոց թիւ 181 քարաշէն տուն մը և յարակից պարտէզն ու ակոսը :

2. Բերա, Պէքեաֆ Փողոց թիւ 5 քարաշէն տան մը 5/8 լոտինը :

3. Պոլիս, Պաճէ Գարու, Արփաճըլար Ճատտէսի թիւ 27 քարաշէն կալուած մը, որ կը բաղկանայ խանութէ մը և վրան երկու յարկէ :

Իսկ ասոնցմէ զատ Ազգին կը տրամադրէր փէրալի և այլ ծախուց համար խափեար խանի մէջ ունեցած թիւ 57, մօտաւորապէս 200 ոսկի հնչուն արժէքով իր մէկ փոքր կրպակը, որ պիտի ծախուէր :

Տիար Միհրան Ինճէեան իր կտակին մէջ կ'որոշէր իր ազգին նուիրած կալուածներուն մատակարարութեան մասին կարգ մը կարգադրութիւններ, որոնք անոնց բարեօք տնտեսութեան, հասոյթներու արգիլնաւորման և ապահովման կը ձգտէին :

Այս փափուկ պաշտօնը Ազգային Կեդր. Վարչութիւնը 1911 Հոկտ. 21ին կ'որոշէ վստահիլ Բերայի Պարտուց Հատուցման Յանձնաժողովիս, որ 1911 Հոկտ. 24 թուական պաշտօնագրով ստանալով կտակին պատճէնը, կը հետամտի անոր գործադրութեան :

Յանձնաժողովս խնդիրը լրջօրէն ուսումնասիրելէ յետոյ ներկայացուց իր սուաջարկը Վարչութեան և հուսկ ուրեմն երկուստեք հաւանութեամբ որոշուեցաւ .

Ա. 5 0/10 տակաւ բանեցնել յիշեալ կտակի հաշւոյն Յանձնաժողովիս անտուկէն վճարուած ու վճարելի գումարներուն վրայ :

Բ. Կալուածոց տարեկան հասոյթէն 2 0/10 վար դնել իբր գիւտնական տուրք՝ մատակարարութեան համար Յանձնաժողովիս կողմէ տեղի ունենայիք ծախքերուն ի փոխարինութիւն :

Գ. Յանձնաժողովիս անտուկին անձկութեան մատնուելու պատահականութեան հանդէպ գիծել Պատ. Տնտեսական Խորհրդոյ աջակցութեան , որ իր միջոցներով Յանձնաժողովիս օժանդակելու հրահանգ ստացած էր խառն ժողովէն :

Այս կարգադրութեանց համաձայն , Յանձնաժողովս կանոնադրաբար մինչեւ 1920 թուական , եռամսեայ միջոցաւ , հասցուց Տիար Միհրան Ինճէեանի հասցէին տաւել տարի 12,000 Փր.ի գումար մը իբր կենսաթոշակ , ըստ կտակի տրամադրութեան : Սակայն պատերազմէն յետոյ , 1920ին Տիար Միհրան Ինճէեան կը պահանջէ իր կենսաթոշակին վրայ յաւելում մը մէջ բերելով ապրուստի տիրոջ արտակարգ սղութիւնը և 1920 Յունիս 26ին Նորատուէեան էֆ.ի առաջարկով իրեն կը դրկուի 20,000 Փր.ի գումար մը իբր փոխատուութիւն : Իսկ 2 Յուլիս 1920ին 15,000 Փր. ևս կը դրկուի Ս. Պատրիարքին հրամանով : Վերջապէս Ազգ. Կեդր. Վարչութիւնը կը քննէ խնդիրը և կ'որոշէ 12,000 Փր.ի տարեկան կտակով արամադրած գումարէն զատ 1920ին դրկել 36,000 Փր.ի բացառիկ գումար մը :

Սակայն Տիար Միհրան Ինճէեան անբաւական կը գտնէ այս կարգադրութիւնը և Քաղ. Ժողովը հարցը վերստին քննելով՝ կը հրամայէ Տիար Ինճէեանի կենսաթոշակը բարձրացնել 72,000 Փր.ի , մինչև ցնոր տնօրինութիւն :

1921ին կրկին կ'որոշուի այս գումարը անփոփոխ պահել :

Այս կտակը՝ որ պիտի գործադրուի յետ մահու Տիար Միհրան Ինճէեանի , կը խոստանայ օգտակար հիմնարկութիւն մը ըլլալ , վասն զի անոր հասոյթը որոշուած է յատկացնել Եւրոպայի քաղաքակիրթ երկրներ ուսանող զրկելու 2000 Փր. տարեթոշակով , որքան թոյլ տան իր հասոյթները : Ուսանողները պիտի ըլլան անպատճառ Հայ Լուսաւորչական և զատառայի և կարօտ պատանիներ , որոնք պէտք է ըլլան բարոյականի տէր և առողջ կազմով : Անոնք պէտք է հետեւին գիւղատնտեսութեան , ճարտարապետութեան , հանքային և մեքենական գիտութեանց , էլիկայագիտութեան , կամուրջներու և խճուղեայ ճարտարաշինութեան և ուրիշ գործնական արուեստներու , բայց ոչ բժշկութեան , իրաւագիտութեան և աստուածաբանութեան : Ուսանողները կանխաւ պէտք է յանձն առնեն գրաւորապէս հայարնակ դաւանելու մէջ հաստատուիլ և հոն ի գործ վնել իրենց արուեստը :

Ասոնք ցոյց կու տան արդէն թէ Տիար Միհրան Ինճէեան ինչպիսի գաղափարներէ մղուած կատարած է իր այս շատ կարեւոր ու ազդեցւած նուիրատուութիւնը :

Յանձնաժողովս այս առթիւ պարտք կը համարէ շնորհակալութեամբ յիշատակել թէ Տիար Միհրան Ինճէեան իր նախապէս ազգին նուիրած կալուածներուն վրայ աւելցուցած է նաև Նիսի իրեն սեփական դեղեցիկ վիլլան , ուր այժմ ինք կը բնակի : Այս Կերպով ազնիւ բարերարը կ'ուզէ իր անունով հիմնարկելի հաստատութիւնը դնել աւելի լայն սահմանի վրայ գործելու վիճակին մէջ :

ԿՐԻՄՇԵԱՆ ԿՏԱԿԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

6 Օգոստոս 1905ին պատրիարքական պաշտօնագրով մը կը ծանուցուէր Ազգ. Կեդր. Վարչութեան խառն ժողովոյ որոշումը, որուն համաձայն Յանձնաժողովիս կը յանձնուէր Կիւմշեան կառկի դրամագլուխը եղած կալուածներուն մատակարարութիւնը և կառկին գործադրութիւնը: Ուստի կը յանձնարարէր այս տնօրինութեան համաձայն ստանալ նոյն վազֆի նախորդ հաշիւները Տիար Յակոբ Յակոբեանէ և նոր հաշիւ կազմելով բոտ օրինի հաղորդել Ազգ. Պատրիարքարանի:

Վարչական սոյն կարգադրութեան համաձայն՝ ստանձնելով նոյն վազֆի մատակարարութեան հոգը՝ հաշիւները փոխանցուեցան մեզ Տիար Յակոբեանի կողմէ 1905 Դեկտ. 10ին:

Տիար Յակոբ Յակոբեան Յանձնաժողովիս կը յանձնէ նաեւ 139.60 ¹/₂ լիրայի գումար մը՝ իրր պատրաստ, գոյացեալ Կիւմշեան կալուածոց նախորդ մատակարարութիւնէն, զոր Յանձնաժողովս կ'անցընէ մատակարարութեան հաշւոյն, բանեցնելով անոր վրայ 4 ⁰/₁₀ տոկոս մը, վերոյիշեալ գումարը դրամագլուխ նկատելով:

Իսկ Կիւմշեան վազֆի միւս հասոյթները կը կազմէին Վալաթիա Թօփ-ճըլար Ճատտէսի թիւ 114 և Տէմիրճիլէր թիւ 5 գարեջրատան և անոր եռեւի խանութներուն, Բերա Ասմայր Մէսճիա և Պէշկիմաշ երկու տուներու վարձքերը: Յանձնաժողովս արդար դատած էր 3 ⁰/₁₀ տոկոս մը սահմանել այն գումարներուն համար, որոնք պիտի դանձուէին կալուածներէն, և վազֆի անտուկէն պիտի անցնէին Յանձնաժողովիս անտուկին, և այսպէս չա՛ն մը առաջ պիտի դար սոյն վազֆին:

Երբ Յանձնաժողովս մատակարարութեան կ'անցնի այս կտակը, Վալաթիոյ Թօփճըլար Ջատտէսի գարեջրատան վարձքերը զիջուած էին 378 լիրա և գանձուած տեղի չէր ունեցած Կիւմշեան ժառանգորդաց և վարձակալին մէջ ծագած հաշուական խնդիրներու պատճառով: Վարձակալն իրր առնելիք ցոյց կու տար իր միջոցաւ աւելցուած երկու տնտեսներու ծախքը 114.57 լիրա, պարտէզի նորոգութեան ծախքը 38 լիրա, թանգիֆաթի աուրքերու տարբերութիւնը 15 լիրա և դատական ծախք 13 լիրա և այլն, ընդ աւմէնը 228.57 լիրա, և կը պահանջէր իր այս ծախքերը զեղչել վարձքէն, առարկելով որ չէ՛ր քին վիճակը — որ միայն դուռ մը կը ներկայացնէր Վալաթիոյ պողոտային վրայ — առանց այդ շինութեանց բան մը չէր արժեր: Իսկ Կիւմշեան ժառանգորդները և իրենց ներկայացուցիչը չէին յօժարած ընդունիլ վարձակալին խնամքերարար կատարած այս ծախքերը և ներկայացուցած առաջարկութիւնը, և այս անհամաձայնութեան պատճառաւ վարձքերը չէին կրնար ձեռք բերուիլ: Յանձնաժողովս քննելով խնդիրը և լսելով նաեւ այս մասին Տիար Յակոբեանի դիտողութիւնները, հարկ անհրաժեշտ նկատեց իրաւախօհութեան մը յանգիլ վարձակալին հետ և 63.07 ¹/₂ լիրա զեղչելով մնացորդը 165 ¹/₂ լիրայի ծախքը զեղչեց 378 լիրա պարտքէն և գանձեց մնացորդը 212 ¹/₂ լիրան, յաւելեալ չէնքերը վազֆին մնալու պայմանաւ: Եւ 1906 Մարտ 1էն երեք տարուան պայմանագրով վարձու տուաւ այս չէնքը:

Ասամարը Մէսիսիի և Պէշիկթաշի տուները Յանձնաժողովս չորս տարուան թղիթով հինգ տարուան համար կ'ապահովագրէ: Իսկ Ղալաթիոյ գարնաջրատունը և անոր ետևի խանութները չի կրնար, որովհետեւ ապահովագրական ընկերութիւնները մերժած էին ապահովագրել նոյն կալուածները:

Յանձնաժողովս տարի մը յետոյ կ'առաջարկէ Վարչութեան որ իրը գանձողչէք և զիւանական ծախք $5\frac{1}{2}\%$ մը դրուի յօգուտ կալուածոց սնտուկին, կալուածներու մատակարարութեան համար, և Վարչութիւնը կ'ընդունի այս առաջարկը: Կիւմշեան վազֆի տրամադրութեան համաձայն, զուտ հասոյթին $20\frac{1}{2}\%$ ը դրամադրութի վրայ աւելցուելէ յետոյ՝ մնացեալը պիտի բաժնուէր սապէս. —

$15\frac{1}{2}\%$ ը պիտի սահմանուէր զպրոցական դրքերու հրատարակութեան, աղքատներու ձրի տրուելու պայմանով: Այս մասը մինչև 1908 կը տրուէր Նպաստից Յանձնաժողովին և 1909Էն յետոյ, երբ Միացեալ Ընկերութիւնը վերակազմուեցաւ, անոր տրամադրուեցաւ, և այսպէսով կտակին այդ պայմանը գործադրելու հոգը չստանձնեց Յանձնաժողովս, Վարչութեան հաւանութեամբ:

$10\frac{1}{2}\%$ ը Էջմիածնայ Մայր Աթոռին:

$10\frac{1}{2}\%$ ը Երուսաղիմայ վանքին:

$40\frac{1}{2}\%$ ը Կեսարիոյ Սարգիս Կիւմշեան վարժարանին:

$5\frac{1}{2}\%$ ը Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին:

Այս թուականէն սկսեալ Յանձնաժողովս կանոնաւորապէս տարուէ տարի իր մատակարարութեան հաշիւը ներկայացուցած է Տնտեսական Խորհուրդին, ինչպէս նաև շահագրողութեան մարմիններուն, բացատրական տեղեկագիրներով:

1914 Յունուարին կը կատարուի Կիւմշեան կտակի առարկայ կալուածներուն քսանիկը գայտի դորձադրութիւնը:

Յանձնաժողովս 1905Էն մինչև 1920 այս հաստատութիւնը խղճմամբ և մատակարարելէ յետոյ, 1920 Դեկտ. 10ին փոխանցեց բոլոր սոմարները և վաւերաթուղթերը իր յատուկ Խմակակալութեան, որովմամբ Ազգ. Կեդր. Վարչութեան, հաշուեկշիռով մը, որ զոյց կուտայ այս կտակին դրամական կացութիւնը, յանձման պահուն: (Սոյն հաշուեկշիռը տեսնել յաջորդ էջին մէջ):

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍՐԵՒԱՆՁՏԵՍՆՅՈՒՆՆԵՐ

Պատրիարքարանի կարգադրութեամբ 1893 Սիպ. 31ին Բերայի Պարտուց Հատուցման Յանձնաժողովին յանձնուած է 1023.50 Լ. Օ.: Յանձնաժողովը 1893 Հոկտ. 1Էն սկսեալ $5\frac{1}{2}\%$ տոկոսով, որ տարուէ տարի դրամագրութիւն վրայ կը բարդուէր 1907 Յունիս 23ին այս գումարը կը հասնի 2000 Լ. Օ.ի և ըստ կտակին տրամադրութեան կ'որոշուի այդ դրամին տոկոսը յատկացնել իր նպատակին: Շահագործումը Լը ձգուի դարձեալ Յանձնաժողովիս, և սա պարտավորակը կ'առաջուի:

«Պատրիարքական 3 Յունիս և 1 Յուլիս 1893 թուակիր պաշտօնաւորներով հաստատեալ իրաւասութեամբ ստացանք Ազգ. Կեդր. Մատուկէն՝ «ի փոխառութիւն Բերայի Ազգ. կալուածոց Մատուկի հաշուին Լ. Օ. 2000

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 3. ԿԻՒՄՇԵԱՆ ԿՏԱԿԻ

1 Յունուար 1920-ի 19 Նոյեմբեր 1920

ԳՈՅՔ

ՊԱՐՏՔ

ՎԱՐՁԱԿԱԼՔ Առաջարկ Մէտճիտ թիւ 131 նախկին վարձատիր կալ Ամենէ Համատուէ պահանջ 12,285.50 ՊԱՐՏՈՒՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Մնացորդն հաշիւ 4 1/2 տոկոսով 121,557.— Ընթացիկ » 3 1/2 » 199,954.25 321,511.25	ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՍՈՅՔ Կտակընկալ հաստատութեանց բաժանելի հասոյթ որ կը ներկայացնէ Ամենէ Հա- մատուէ պարտքը և որ դեռ գանձած չըլլա- յուն փոխադրուած է ի նոր հաշիւ 12,285.50 ԱՆՁԵՌՆՄԵԵԼԻ ԴՐԱՍԱԳԼՈՒՆ 1920 Յունվ. 1ին 117333 Տոկոս մինչև 19 Նոյ 1920 4224 Զատ հասոյթին որ է 127005 1/2 20 1/2 25401 146,958.— ԿՏԱԿԵՆԿԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ 1919ի հաշուեկշիռէն մնացած և 1920 զատ հասոյթէն գոյացած Ս. Երուսաղէմի 10 1/2 րաժին 30578.75 Ս. Էջմիածնայ 10 1/2 » 36563.50 Ազգ. Հիւանդանոցի 5 1/2 րաժին 15290.25 Միացեալ Ընկ.եանց 15 1/2 » 45867.25 Ս. Կիւմիսեան Վրժ. 40 1/2 » 46253.50 174,553.25 333,796.75	333,796.75
---	---	-------------------

« (երկու հազար յիստ օսմ.) Սրուանձտեանց կտակէ: Յանձնաժողովս պար-
 « տաւ, է ոսոյն դուժարին տարեկան 5 0/0 տոկոս տալ և ամէն տարւոյ վերջ»
 « եթէ տոկոսը հաստացուի մայր դուժարին վրայ բարդելով զայն՝ անոր ալ
 « տոկոս բանեցնել, և երբ Ազգ. Պատրիարքարանի կողմէ սոյն գումարը թէ՛
 « մասնակի և թէ՛ ամբողջովին պահանջուի հանգերձ տոկոսեօք, Յանձնա-
 « ժողովս պարտի վճարել անոր հրամանին:

«Սոյն փոխառութիւնն երաշխաւորեալ է Բերայի Ազգ. կալուածներով»
 Ի դիմաց Պարտոց Հասուցման Յանձնաժողովոյ Ազգ. Կալուածոց Բերայի
 Գանձապետ Ատենադպիր Ատենապետ

ՄԻՀՐԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՐՏԱԷԼՍ ՄԿՐԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ՅՕԳԱՏԵԱՆ

23 Յունիս 1907

Արդարեւ, կտակին գործադրութիւնը կը յապաղի մինչեւ 1913, երբ
 վարչութեան կարգադրութեամբ այս գումարին տոկոսն 100 Լ. 0. կ'որոշուի
 տալ վանայ Ամերիկեան հիւանդանոցին, պայմանաւ որ Առաջնորդարանէն
 յանձնարարեալ հիւանդները դարմանուին: Այս կերպով իրագործուած կ'ըլլար
 հանգուցելոյն կամքը, որ էր վանայ մէջ հիւանդանոցի՝ մը հիմնարկութիւնը:

Դժբախտաբար ընդհ. պատերազմի պատճառաւ վանայ Ամերիկեան
 հիւանդանոցը կը փակուի և մանաւանդ վան կը զրկուի իր հայ բնակչութենէն
 և հետեւաբար կը դադրի տարեկան 100 ոսկիի վճարումը: Այսօր Սրուանձ-
 տեանց կտակի դրամադրութիւնը հասած է բազմապիսի տոկոսով, ինչպէս պայ-
 մանուած էր, 3558.64ի և կը մնայ Յանձնաժողովիս մօտ:

Յանձնաժողովս այս առթիւ աւելորդ չի գտներ դիմել տալ թէ
 օգտակար զեր մը կատարած է այնպէս պաշտպանելով և պահպանելով ո՛չ
 միայն կտակեալ զրամ մը, այլ իր տուած տոկոսներով գումարը աճեցուցած
 և նպատակին իրագործման նպաստած է:

ԱՌԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ

Յանձնաժողովս բացի այս մեծ կտակներու դրամադրութիւնն պահպա-
 նութենէն և շահագործումէն, մեծապէս նպաստած է նաեւ տղային զանազան
 հատաւորութեանց, անոնց կողմէ իր քով ձգուած գրամները շահագործելով
 օգտակարապէս:

Առաջմէ մէկ քանին կը յիշենք, գաղափար մը տալու համար Բերայի
 Պարտոց Հասուցման Յանձնաժողովին մատուցած ծառայութեան վրայ՝
 այս տեսակետով:

1. Տիվրիկի ԱԶԳ. ԿԱԼՈՒԱԾՈՅ ՀՈԳԱՅԱՐՁՈՒԹԻՒՆԸ 1893 Օգոս-
 տոս 7ին Բերայի Պարտոց Հասուցման Յանձնաժողովիս իրր փոխառութիւն
 տուած էր 1502.63 Լ. 0. 5 0/0 տոկոսով: Յանձնաժողովս մինչեւ 1902
 Սեպտ. 6ին այդ գումարը շահագործելէ և Տիվրիկի Կալուածոց Հոգարար-
 ձութեան այս գրամն արգիւնաւորելէ յետոյ, ամբողջովին կը վերադարձնէ
 այդ Հոգարարձութեան: Սոյն գումարէն 950 ոսկի յիշեալ Հոգարարձութեան
 կողմանէ յատկացած է ծախու առնելու Բերա, Այնալը Զէշմէ թաղ, Էմինճագ
 ձառտէ թիւ 51 և 53 իրարու կից սրբ վիւյք երկու տունները:

2. ՇԱՀՆԱԶԱՐԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ յատուկ գումարը որ 125.05 Լ. 0. է 5% տոկոսով կը տրուի 1896 Օգոստոս 31ին Յանձնաժողովիս ի շահագործութիւն: 1900 Սեպտ. 12ին լաղադրեալ տոկոսով այս գումարը բարձրացած էր 152.23 Լ. 0.ի, երբ կը հասուցուի Պատրիարքարանի հրամանաւ Յ. Իզմիրեանց մնայուն Յանձնաժողովին:

3. ԱԶԳԱՆՈՒԻՐ ՀԱՅՈՒ ՀՅԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրամները եւս պահած է Յանձնաժողովս, ընթացիկ հաշիւներուն համար 4% եւ պայմանաժամով դրամներուն համար 5% տոկոս վճարելու պայմանաւ բացառաբար: Համիտեան բէժիմի սարսափ ախտած մէկ պահուն երբ Ընկերութիւնը կը դադրէր, Յանձնաժողովիս քով կը ձգուէր 1896 Սեպտ. 4ին 116.06 Լ. 0. 5% տոկոսով: Այս գումարը որ 1904 Հոկտեմբեր 15ին տոկոսներով հասած էր 157.11 1/2 Լ. 0.ի, ամբողջովին կը հասուցուի Պատրիարքարանին:

4. ՈՒՂԻՆՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՐԿԻԶՅԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆԶՆԱԺՈՒԹՈՎԿԷՆ 1906 Յուլիս 28ին 3000 լիւրայի փոխառութիւն մը կը կնքուի 5% տոկոսով, Վէփիւնիւր տան զնման միջոցին, ինչպէս յիշեցինք: 1906էն մինչեւ 1909 տոկոսը՝ որ էր 150 ոսկի, կը վճարուէր Նպատակից Մատուկին Զէյթունի դպրոցներու ծախքին համար: 1909ին երբ Միացեալը վերականգնուեցաւ, այդ գումարը վճարուեցաւ անոր, որպէս զի Զէյթունի վարժարաններու պէտքերուն գործածուի: Մինչեւ 1915 այս կերպով չարունակելէ յետոյ, պատերազմին պատճառով 1916էն սկսեալ իր դրամագլուխին վրայ կը բարդուի:

1919 Հոկտեմբեր 14ին, Վարչութիւնը կը հրամայէ այս գումարը վճարել Եւմուական Յանձնաժողովին, տարագիր Զէյթունցիներու քանդուած բնակարաններուն շինութեան գործածուելու համար:

Յանձնաժողովս կը գործադրէ այս հրամանը 1919 Դեկտ. 19ին յանձնելով Եւմուականին, ի հաշիւ Պատրիարքարանի 3654.04 1/4 օսմ. ոսկի:

5. ՇԻՇԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ ԱՄՓՈՓՈՒԱՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՇԻՐԻՄԻՆ շինութեան համար 1908ին կատարուած հանդանակութեան մը գումարը 61.57 1/2 Լ. 0. 1909 Փետր. 13ին կը ձգուի Յանձնաժողովիս քով: Այս գումարը 4% տոկոսով այժմ բարձրացած է 92.02 1/4 ի եւ դեռ կը մնայ Յանձնաժողովիս մօտ, իր նպատակին յատկանալու համար:

6. ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ եւս հաննէսկուի կտակի գումարէն 4000 օսմ. ոսկիի գումար մը հինգ տարուան պայմանաժամով եւ 5% տոկոսով 1910 Հոկտ. 22ին տուած է Յանձնաժողովիս: Այս գումարը որ հիմա հասած է 5364.91 Լ. 0.ի կը մնայ դեռ Յանձնաժողովիս մօտ:

7. ՎԱՐԳԱԶԱՐԱՆ ԿՏԿԻ մայր գումարն այ 1908 Մայիս 4ին Յանձնաժողովիս յանձնուած է ի շահագործութիւն: Այդ գումարն էր 2189.22 1/2 Լ. 0. եւ պիտի վճարուէր 4% տոկոս: Այսօր այդ գումարը հասած է 2786.33 1/2 ի, կտակին տրամադրութեան համաձայն սահմանեալ գումարներուն վճարուէն զատ:

8. Մ. ԹՕԳԱՏԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ անուամբ ծրագրեալ կտակի մը հաշւոյն Մարտիրոս Թօղատեան ժառանգորդները Յանձնաժողովիս 2200 օսմ.

տակոյ փոխառուութիւն մը կ'ընեն, ինչպէս վերը տեսնուեցաւ, Վէրքիներու բնակարանին գնման առթիւ, 1906 Յունիս 16ին:

Ազգօգուտ նպատակաւ բարեփրաքար կարեւոր հաստատութեան մը հիմնարկութեան համար տրամադրուած այս գումարը, զոր Մ. Թօգատեան ժառանգորդներ տրամադիր էին աւելցնելու և ասով իրագործելու բարեփրաքար Մարտիրոս Թօգատեանի ի կենդանութեան յայտնած մէկ իղձը, 1912 Յունվար 1ին արդէն 5 0/0 տոկոսով բարձրացած էր 2883.45 ³/₄ Լ. Օ. ի, իսկ ներկայիս անիկա կը ներկայացնէ 4614.32 Լ. Օ. ի գումար մը որ կը մնայ Գանձաժողովիս քով: «Մարտիրոս Թօգատեան հաստատութեան» համար Գանձաժողովիս տեղեկութիւն տրուած է թէ բացի Կալուածոցի Սնտուկին հանգուցեալ բարեփրաքար Տիար Տիգրան Թօգատեանի կողմէ յատկացուած 2200 Լ. Օ-էն, իր եղբայրը և «Մ. Թօգատեան հաստատութեան» զաղափարին հեղինակը Տիար Մարտիրոս Թօգատեան, իր Մանչէսթըրի Տան մէջ շահագործուելու սահմանած է որոշ գումար մը, որ երբ 10,000 անգլ. սկիի հասնի, կտակը պիտի գործադրուի:

Գանձաժողովս յուսակոյ է թէ Թօգատեան ժառանգորդք, ժամ առաջ իրագործելու համար իրենց բարեփրաքար երկու եղբայրներուն փափաքը, իրենց կողմէ ալ գումարներ տրամադրելով «Մ. Թօգատեան հաստատութեան», ժամ առաջ պիտի մարմնաւորեն և կազմակերպեն իրենց ընտանիքին անուան պատիւ բերելու և ազգին օգտակար ըլլալու սահմանուած հիմնարկութիւն մը:

9. ՏԻԳՐԱՆ ԴԱՋԱՆՃԵԱՆ կը նուիրէ 250 Լ. Օ. 1919ին, պայմանաւ որ այդ գումարը շահագործուի Գանձաժողովիս կողմէ և անոր տոկոսին կէտը Բերայի վարժարանին ազքստ ուսանողներուն, ¹/₄ը Բերայի քահանայից և ¹/₄ն ալ ազքստներուն յատկանայ: Կտակակատարն է Տիար Միհրան Մուքանան, որուն մահէն յետոյ այդ իրաւունքը պիտի անցնի օրուան Պատրիարքին:

11. ՇԻՇԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՅԱՆԶԵԱԺՈՂՈՎԸ որ երբեմն իր լինութեանց լրացման համար փոխառութիւններ բրած էր Բերայի Պարտուց հատուցման Գանձաժողովէն, 1917 Փետր. 19ին, կը վճարէ իր բոլոր պարտքը և մինչև 1921 Հոկտ. 31 գումարան թուականներով հնազանդէ ի պահ կը թողու 6330.73 Լ. Օ. ի գումար մը, որ կը մնայ Գանձաժողովիս մօտ:

12. ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՏԱԿԻ ՄԵԱՅՈՒՆ ՅԱՆԶԵԱԺՈՂՈՎԸ եւս պահ մը օգտուած է Գանձաժողովէն, անոր ընկելով 1896 Յունիս 24ին 5 0/0 տոկոսով 600 սկիի փոխառութիւն մը որ 1898 Նոյեմբեր 1ին ետ դարձուցած է տոկոսներով միայն՝ 672.48 Լ. Օ. ի:

Ասոնք ամէն ալ ցոյց կու տան թէ Գանձաժողովս իր պաշտօնավարութեան շրջանին ազգային շատ մը հաստատութեանց օժանդակած է, դրամներն ապահով եղանակաւ ի շահ անկելով:

ԾԱԽԵՐԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բերայի Պարտուց Բարձման Գանձաժողովս իր քնդհանուր տեղեկագրին մէջ աւելորդ չի դատեր մօտմանշել թէ հակառակ իր կատարած բազմապիս գործառնութեանց և բաւականաչափ կնճռոտ ու դժուարութիւններով

շրջապատուած գործ մը մատակարարած ըլլալուն, հակառակ անոր որ միշտ դատական գործեր ու կնճիւններ պակաս չեն եղած. եթէ քննուի պիտի տեսնուի թէ իր հասոյթին վրայ $2\frac{1}{2}\frac{0}{0}$ էն աւելի չէ եղած իր մատակարարութեան ծախքերը, ինչ որ ամէն համեմատութենէ դուրս է:

Ե Զ Ր Ա. Կ Ա Յ Ո Ւ Փ Ի Ի Ն.

Յանձնաժողովս իր համարատուութեան իրր եզրակացութիւն. աւելորդ չի գտեր ցոյց տալ թէ իր պաշտօնաւարութեան շրջանին յաջողած է հատուցանել մօտաւորապէս 28,000 օսմ. ոսկիի պարտք մը, ինչ որ իր բուն և գլխաւոր նպատակն էր: Այսօր Բերայի թաղը պարտք հունի իրականութեան մէջ, վասն զի իր պարտքին փոխարէն ունի պատշաճ գրամ հրամատուներու մէջ:

Յանձնաժողովս նոյնպէս արդիւնաւորած է կայուածներու մատակարարութիւնը: Անիկա յաջողած է Եկեղեցին տէր դարձնել փառաւոր պանդոկի մը որ այսօր մայրաքաղաքիս առաջնակարգ և համբաւուած հիմնարկութիւններէն մէկն է և կը ներկայացնէ պատկառելի արժէք մը: Բանկայթի Գերեզմանատան յարակից գետինն վրայ կոտուցած է երկու կառածներ, որոնք մանաւանդ սպազային կը խոտտանան լաւ հասոյթ ապահովել, զնած է Ծաննի բնտանեաց սեփական շէնքերն ու գետինը, իրր անհրաժեշտ պէտք մը ազգային վարժարանին ընդարձակման, Բանկայթի թաղը օժտած է զպրոցի յատուկ շէնքով մը զոր ծախու առած է նպատակաւ պայմաններով:

Ասոնցմէ զատ Յանձնաժողովս կրցած է կալուածական հասոյթը — որ իր պաշտօնի ձեռնարկած ատեն ամսական հազիւ 180 Լ. 0. էր — բարձրացնելու չափը 6000 Լ. 0. ի, որ երկու տարի յետոյ, երբ թօքաթլեանի պայմանագիրը նորոգուի, աւելի պիտի բարձրանայ:

Յանձնաժողովս իր այս յաջողութիւնը կը պարտի այն գրութեան զոր ընդգրկած էր իր կազմութեան օրէն:

Բերայի Պարտուց Հատուցման Յանձնաժողովն իրականութեան մէջ ամերիկեան թրքթի գրութեամբ կազմուած կալուածական վարկի հաստատութիւն մըն էր որ ինչպէս հայ անհատներու նոյնպէս նաև օտարազգիներու քով միշտ վայելած է մեծ վարկ և վստահութիւն:

Մանաւորապէս անոր անդամներուն Ազգ. Կեդր. Վարչութեանը վստահութեամբ և սրտումներովը վերահաստատուիլը առած են անոր տեսականութեան հանդամանք մը և միօրինակ ուղղութիւն մը: Այնպէս որ Յանձնաժողովս չաւնշալով յարափոխօրէն յիմակ մը, կերպով մը դրամական հաստատուն ու տեսական հիմնարկութեան մը տպաւորութիւնը թողած է բոլոր անոնց վրայ, որոնք իրեն հետ գործ ու շփում ունեցած են:

Յանձնաժողովս պաշտօնաւարութեան ամբողջ շրջանին իր բոլոր փառքն ըրած էր բարձր բունի ազգային վարկի՝ միակ հաստատութեան վարկը, և յաջողած է: Միայն սակոսի սակին հետզհետէ աւելի պակսիլը գլխաւոր նշանն էր արգէն այն վարկին ու վստահութեան զոր Պարտուց Հատուցման Յանձնաժողովը կը վայելէր:

Անիկա նուազագոյն սակով փոխառութիւններ կը կատարէր միշտ

արիշ աւելի բարձր սակով եղած փոխառութիւնները հասուցանելու համար, և այսպէս կը յաջողէր տոկոսի սակերը 3 կամ 4 առ հարիւր իջեցնելու մեծագոյն մատուցել:

Նոյնպէս անտուկին պատիւը բարձր պահելու և պահանջաւերելու դրամն իրենց ուղած տոկոսը վճարելու համար, Յանձնաժողովն իր կազմութեան օրէն իսկ հարկ տեսած էր ունենալ իր արամադրութեան տակ պահեստի գումար մը, զոր կազմած ըլլալով կը շահագործէր 5 % տոկոսով երբեմն թանի մը հայ պատուաւոր դրամաւերելու քով:

Այսպէս Յանձնաժողովն միշտ ամէն պատահականութեանց հանդէպ պատրաստ զիրք մ'ունենալով՝ յաջողած է իր պաշտօնավարութեան ընթացքին պատահած երկու մտաբօրիւմներէն չօգտուիլ և կանոնաւոր կերպով իր յանձնառութիւններն օրը օրին կատարել և այսպէս ևս առաւել իր վարկը ամրապնդել և իր տոկոսի սակն իջեցնել:

Յանձնաժողովն, շնորհիւ այս հանգամանքներուն՝ կրցած է Բերայի թաղին կրթական հաստատութեանց զօրկ տալ: 1893ին երբ Յանձնաժողովն պաշտօնի գլուխ կ'անցնէր, սահմանուած էր ամսական 75 լ. 0. վճարուած թիւի Բերայի վարձարաններուն:

1905ին Յանձնաժողովն կրթական օժանդակութեան այդ գումարը թաղ. կործուրդին հետ համաձայնութեամբ կը բարձրացնէ 100 լ. 0.ի, և յետոյ 1914ի Յունիստըն 120 լ. 0.ի և 1917 Նոյեմբերէն 160 լ. 0.ի:

1919 Փետր.ին Բերայի Որբանոցին Յանձնաժողովն կը յառկացնէ 250 լ. 0. ամսական:

1920 Մայիսէն սկսեալ Յանձնաժողովն իր կրթական օժանդակութիւն յանձն կ'առնէ վճարել ամսական 1000 լ. 0., ինչ որ այս տարի կը բարձրանայ 1500 լ. 0.ի: Իսկ Բերայի որբանոցին կը տրուի ամսական 850 լ. 0., ինչ որ կը նշանակէ թէ հիմա Յանձնաժողովն ամսէ ամիս կը վճարէ 2350 լ. 0. գումար մը թաղին կրթական հաստատութեանց:

Ասոնցմէ զատ, ինչպէս տեսնուեցաւ, այս հիմնարկութիւնը բազմաթիւ ազգային հաստատութիւններու մեծագոյն ծառայութիւնը մատուցած է անոնց՝ գրամները ո՛չ միայն իրը աւանդ պահպանելով, այլ տակոսով աճեցնելով և օգտագործելով:

Անիկա վարչութեան որոշումով երբեմն նոյն իսկ փոխառութիւնները բրած է կարգ մը հաստատութեանց՝ նեղ վայրկեաններու մէջ:

Այսպէս՝ միայն զինպաղարէն յետոյ Յանձնաժողովն ո՛չ միայն կը հազայ Բերայի Որբանոցին ծախքերու մեծ մասը և այսպէս կը բերէ իր մասնակցութիւնը, խնամատարական գործին 100ի չափ որբերու հոգը ստանձնելով, այլ ցարկ տրամադրած է 50,000 լ. 0.ի գումար մը նոյն նպատակով, որուն 2500 լ. 0. Անկախութեան Փոխառութեան համար Յանձնաժողովն կողմէ վճարեալ 5000 լ. 0.ի կէսն է, որ իր որբերու նուէր վարչական անօրինութեամբ վար գրուեցաւ, մնացեալն ալ անտոկոս փոխառութիւններ են, որոնք կատարուած են նոյնպէս Ազգ. կեդր. վարչութեան կարգադրութեամբ:

Այս 47,500 լ. 0.ի 40,000ը այն գումարն է որ Տիար Մ. Թօգաթլեանի յետնեալ պարտուց ի հաշիւ գանձուած գումարէն արուած է և 7500

Լ. Օ. ն ալ դարձեալ Վարչութեան հրամանով տրուած է Կիլիկիոյ համար կատարուած հանգանակութեան առ հաշիւ, վերջէն վերադարձնելու պայմանաւ, և ցարդ չէ վճարուած: Նոյնպէս Վարչութեան 1921 Հոկտ. 22ի հրահանգին համաձայն 2000 Լ. Օ. ալ Հիւանդանոցին Հոգարարձութեան փոխառութիւն մը եղած է 1921 Հոկտ. 25ին:

Յանձնաժողովս իր պաշտօնավարութեան շրջանին ո'չ միայն ազգային հաստատութեանց, այլ նաեւ հայ անհատներու ալ օգտակար եղած է: Շատ մը աշխատակար, որբերու և իրենց դրամն ապահով տեղ մը գնելով անոր տուածով օրապահիկին հայթայթելու պէտք ունեցող անձերու համար փոխանցելու հաստատուն հիմնարկութիւն մը եղած է: Յանձնաժողովիս անտուկը, որ այս կերպով որքան զրամական նոյնքան ալ մարդասիրական ծառայութիւն մը մատուցած է հայ ժողովուրդին:

Յանձնաժողովս ինչպէս 1895-1896ի նոյնպէս նաեւ վերջին աղէտայի պատերազմին տառն շատ կարեւոր ծառայութիւն մը մատուցած է մեր դաւաճող ազգայնոց որոնք զինուորութեամբ կամ տարազրութեամբ կը հեռացուէին Կ. Պոլսէն: Ասոնցմէ ոմանք կըցած են վտանգը նախատեսելով անմիջապէս իրենց ունեցած զրամները կամ թանկագին ստարկաներն աւանդ թողուլ Յանձնաժողովիս անտուկին:

Յանձնաժողովս այդ աւանդները նոյնութեամբ և անփոխալ պահած է և անոնց դարձին կամ իրենց ցոյց տուած անձերուն հաղարձեցած է:

Բոլոր ասոնք ցոյց կու տան թէ Յանձնաժողովս իր պաշտօնավարութեան շրջանին, ո'չ թէ միայն խղճմտութեամբ կատարած է Ազգ. Յեղր. Վարչութեանց կողմէ իր վրայ դրուած պարտականութիւնները, այլ նաեւ աշխատած է աւելին կատարել, իր գործառնութիւններով փոխանութեան ու վարկի ազգային հաստատութիւն մը կազմակերպել և զայն տրամադրել ազգային հաստատութեանց, ինչպէս նաեւ հայ անհատներու, որոնք միշտ օգտուած են, երբ դիմում րած են:

Հետեւաբար, Յանձնաժողովս իր գործառնութեանց մասին այս տեղեկութիւնները ներկայացնելով և զանոնք յանձնելով իբր նախագահի Ազգ. Կեղր. Վարչութեան Ամենապատիւ Սրբազնութեանց և այնու Ազգին ուշադրութեանը, կը մատուցանէ իր սրգիական ակնածանացը հաւաստիքը:

Որով մնամք

Անգամը հրամարեալ Բերայի Պարսուց Բարձման Յանձնաժողով

Ասեւնապետ	Ասեւնապետ	Գեւորդիս
ՅՈՎԱԷՓ ԳԱԶԱՋԵԱՆ	ԱՐՏԱԷՆ ՄԿՐԵԱՆ	ՄԻՀՐԱՆ ՄՈՒՐԱՏԵՆ

Յ. Դ. — Մեր ընդհանուր համարատուութեան յարակից պատիւ ունինք ներկայացնելու նաեւ Բերայի կալուածոց 28ամեայ մատակարարութեան հաշուեկէիտը, ինչպէս նաեւ վիճակագրական և հաշուական մի քանի տեղեկութիւններ, որոնք կը ծառայեն լուսարանելու վերեւ րուածները:

ՎԻՃԱԿ 1921 ՕԳՈՍՏՈՍ 31Ի

ԳՈՅՔ ԵՒ ՊԱՀԱՆՋՔ

ՊԱՐՏՔ

ԱՆՏՈԿՈՍ ՊԱՀԱՆՋՔ		ԱՆՏՈԿՈՍ ՊԱՐՏՔ	
Ազգային նշանակման Յանձնաժողովին	4750000 —	Բանկալժիի Գերզմ. Շենքին. — Քաղաքապետու-	
Բերայի Արևմտամեջին	100000 —	Սննդ զանազան գրավին մնացածը	548454 —
Բերայի Արևմտամեջին	65000 —	Տորպետների Վարձին. — Ծախսած էնրազի արժէք	41000 —
Բերայի Թագ. Խորհուրդին (կրթ. յատկացում կան-	260000 —	Թագ. Խորհուրդ Բերայի. — Աւանդ ձգած գրամ	35000 —
խաղձար)		Յարուժին Մանուկեանի	1200 —
Վարձակալներ (31 Օգոստոսին դեռ չզանձուած	1013542 —	Տուրուռեան կապկի	40000 — 665654 —
վարձքեր)			
Մ. Ինճէեան Կտակ. (Մ. Ինճէեանի դրկուած	191461 25	ՏՈԿՈՍԱՌՈՐ ՊԱՐՏՔ	
տարեկաններ, մնացորդ, հաշուակցելի իր կալ-		Մ. Գրամ	Տոկոս
ուածոց վարձքերով)		50/0 Կտակաւք	502350 + 390005 892355 —
Հաշուակցելի ՍուրբՄանր. Քանարչար միւ.Ֆ.Ս.Սիշ-		40/0 >	265000 + 40134 1/2 305134 50
լիկիէ առնուած սուրբՄանր. Կանան Վրժի		30/0 >	50000 + 3600 53600 —
բոնադրական փոխարէն իրր հատուցում որդ-		50/0 Մանաւորք	605000 + 299096 1/4 904096 25
ուած զոմարէ	151543 75	40/0 >	218677 1/2 + 45611 1/4 264288 75
Սետուկը պատրաստ գրամ	6992 50	30/0 >	44500 + 93613 1/4 53861 75
	6538539 50	Յ. Կիմչեան Կտակ 40/0	125380 —
		> > 30/0	204667 —
ՏՈԿՈՍԱՌՈՐ ՊԱՀԱՆՋՔ		Շիշլիի Գերզմ. Յանձնաժողով 50/0	504073 — 3307456 25
Քուէտի Լիճնէ Դրամատունին	2851019 —		
Տառնական Խորհուրդէ	172905 50	ՎԻՃԱԿ. — Առանկուժին պահանդիք	5589353 75
	3023924 50		
	9562464 —		9562464 —

ԴԱՏԱԿԱՆ ԴՆՏԱԿԱՆ	ԴԱՏԱԿԱՆ ԴՆՏԱԿԱՆ	ԴԱՏԱԿԱՆ ԴՆՏԱԿԱՆ	ԴԱՏԱԿԱՆ ԴՆՏԱԿԱՆ	ԴԱՏԱԿԱՆ ԴՆՏԱԿԱՆ
1991	1992	1993	1994	1995
1996	1997	1998	1999	2000
2001	2002	2003	2004	2005
2006	2007	2008	2009	2010
2011	2012	2013	2014	2015
2016	2017	2018	2019	2020
2021	2022	2023	2024	2025
2026	2027	2028	2029	2030
2031	2032	2033	2034	2035
2036	2037	2038	2039	2040
2041	2042	2043	2044	2045
2046	2047	2048	2049	2050
2051	2052	2053	2054	2055
2056	2057	2058	2059	2060
2061	2062	2063	2064	2065
2066	2067	2068	2069	2070
2071	2072	2073	2074	2075
2076	2077	2078	2079	2080
2081	2082	2083	2084	2085
2086	2087	2088	2089	2090
2091	2092	2093	2094	2095
2096	2097	2098	2099	2100
2101	2102	2103	2104	2105
2106	2107	2108	2109	2110
2111	2112	2113	2114	2115
2116	2117	2118	2119	2120
2121	2122	2123	2124	2125
2126	2127	2128	2129	2130
2131	2132	2133	2134	2135
2136	2137	2138	2139	2140
2141	2142	2143	2144	2145
2146	2147	2148	2149	2150
2151	2152	2153	2154	2155
2156	2157	2158	2159	2160
2161	2162	2163	2164	2165
2166	2167	2168	2169	2170
2171	2172	2173	2174	2175
2176	2177	2178	2179	2180
2181	2182	2183	2184	2185
2186	2187	2188	2189	2190
2191	2192	2193	2194	2195
2196	2197	2198	2199	2200
2201	2202	2203	2204	2205
2206	2207	2208	2209	2210
2211	2212	2213	2214	2215
2216	2217	2218	2219	2220
2221	2222	2223	2224	2225
2226	2227	2228	2229	2230
2231	2232	2233	2234	2235
2236	2237	2238	2239	2240
2241	2242	2243	2244	2245
2246	2247	2248	2249	2250
2251	2252	2253	2254	2255
2256	2257	2258	2259	2260
2261	2262	2263	2264	2265
2266	2267	2268	2269	2270
2271	2272	2273	2274	2275
2276	2277	2278	2279	2280
2281	2282	2283	2284	2285
2286	2287	2288	2289	2290
2291	2292	2293	2294	2295
2296	2297	2298	2299	2300
2301	2302	2303	2304	2305
2306	2307	2308	2309	2310
2311	2312	2313	2314	2315
2316	2317	2318	2319	2320
2321	2322	2323	2324	2325
2326	2327	2328	2329	2330
2331	2332	2333	2334	2335
2336	2337	2338	2339	2340
2341	2342	2343	2344	2345
2346	2347	2348	2349	2350
2351	2352	2353	2354	2355
2356	2357	2358	2359	2360
2361	2362	2363	2364	2365
2366	2367	2368	2369	2370
2371	2372	2373	2374	2375
2376	2377	2378	2379	2380
2381	2382	2383	2384	2385
2386	2387	2388	2389	2390
2391	2392	2393	2394	2395
2396	2397	2398	2399	2400
2401	2402	2403	2404	2405
2406	2407	2408	2409	2410
2411	2412	2413	2414	2415
2416	2417	2418	2419	2420
2421	2422	2423	2424	2425
2426	2427	2428	2429	2430
2431	2432	2433	2434	2435
2436	2437	2438	2439	2440
2441	2442	2443	2444	2445
2446	2447	2448	2449	2450
2451	2452	2453	2454	2455
2456	2457	2458	2459	2460
2461	2462	2463	2464	2465
2466	2467	2468	2469	2470
2471	2472	2473	2474	2475
2476	2477	2478	2479	2480
2481	2482	2483	2484	2485
2486	2487	2488	2489	2490
2491	2492	2493	2494	2495
2496	2497	2498	2499	2500
2501	2502	2503	2504	2505
2506	2507	2508	2509	2510
2511	2512	2513	2514	2515
2516	2517	2518	2519	2520
2521	2522	2523	2524	2525
2526	2527	2528	2529	2530
2531	2532	2533	2534	2535
2536	2537	2538	2539	2540
2541	2542	2543	2544	2545
2546	2547	2548	2549	2550
2551	2552	2553	2554	2555
2556	2557	2558	2559	2560
2561	2562	2563	2564	2565
2566	2567	2568	2569	2570
2571	2572	2573	2574	2575
2576	2577	2578	2579	2580
2581	2582	2583	2584	2585
2586	2587	2588	2589	2590
2591	2592	2593	2594	2595
2596	2597	2598	2599	2600
2601	2602	2603	2604	2605
2606	2607	2608	2609	2610
2611	2612	2613	2614	2615
2616	2617	2618	2619	2620
2621	2622	2623	2624	2625
2626	2627	2628	2629	2630
2631	2632	2633	2634	2635
2636	2637	2638	2639	2640
2641	2642	2643	2644	2645
2646	2647	2648	2649	2650
2651	2652	2653	2654	2655
2656	2657	2658	2659	2660
2661	2662	2663	2664	2665
2666	2667	2668	2669	2670
2671	2672	2673	2674	2675
2676	2677	2678	2679	2680
2681	2682	2683	2684	2685
2686	2687	2688	2689	2690
2691	2692	2693	2694	2695
2696	2697	2698	2699	2700
2701	2702	2703	2704	2705
2706	2707	2708	2709	2710
2711	2712	2713	2714	2715
2716	2717	2718	2719	2720
2721	2722	2723	2724	2725
2726	2727	2728	2729	2730
2731	2732	2733	2734	2735
2736	2737	2738	2739	2740
2741	2742	2743	2744	2745
2746	2747	2748	2749	2750
2751	2752	2753	2754	2755
2756	2757	2758	2759	2760
2761	2762	2763	2764	2765
2766	2767	2768	2769	2770
2771	2772	2773	2774	2775
2776	2777	2778	2779	2780
2781	2782	2783	2784	2785
2786	2787	2788	2789	2790
2791	2792	2793	2794	2795
2796	2797	2798	2799	2800
2801	2802	2803	2804	2805
2806	2807	2808	2809	2810
2811	2812	2813	2814	2815
2816	2817	2818	2819	2820
2821	2822	2823	2824	2825
2826	2827	2828	2829	2830
2831	2832	2833	2834	2835
2836	2837	2838	2839	2840
2841	2842	2843	2844	2845
2846	2847	2848	2849	2850
2851	2852	2853	2854	2855
2856	2857	2858	2859	2860
2861	2862	2863	2864	2865
2866	2867	2868	2869	2870
2871	2872	2873	2874	2875
2876	2877	2878	2879	2880
2881	2882	2883	2884	2885
2886	2887	2888	2889	2890
2891	2892	2893	2894	2895
2896	2897	2898	2899	2900
2901	2902	2903	2904	2905
2906	2907	2908	2909	2910
2911	2912	2913	2914	2915
2916	2917	2918	2919	2920
2921	2922	2923	2924	2925
2926	2927	2928	2929	2930
2931	2932	2933	2934	2935
2936	2937	2938	2939	2940
2941	2942	2943	2944	2945
2946	2947	2948	2949	2950
2951	2952	2953	2954	2955
2956	2957	2958	2959	2960
2961	2962	2963	2964	2965
2966	2967	2968	2969	2970
2971	2972	2973	2974	2975
2976	2977	2978	2979	2980
2981	2982	2983	2984	2985
2986	2987	2988	2989	2990
2991	2992	2993	2994	2995
2996	2997	2998	2999	3000

Արտադրողի Գրանցում
Հանրային - Մարտի

Արտադրողի Գրանցում
Հանրային - Մարտի

Արտադրողի Գրանցում
Հանրային - Մարտի

Արտադրողի Գրանցում
Հանրային - Մարտի

Արտադրողի Գրանցում
Հանրային - Մարտի

Հետևաբար Բանձնաժողովս նախկին Կալուածոց Հոգաբարձութեան պարտքը 11,148.43 $\frac{1}{2}$ Լ. Օսմ. հատուցանել յետոյ, 55,893.53 $\frac{3}{4}$ Լ. Օ. պահանջից առաւելութիւն մը կը ներկայացնէ։ Այսքանով չի վերջանար սակայն իր գործունէութիւնը. կ'արժէ որ անգամ մըն ալ ձեռք տանենք իր քանակութեամբ սն ժառանգարարութեան ընդհանուր հաշիւը և թուանշաններով խօսինք։ Ըսինք թէ 282,615.14 $\frac{3}{4}$ Լ. Օ. ընդհ. հասոյթի գէժ 172,815.80 $\frac{3}{4}$ Լ. Օ. ընդհ. ծախք եղած է, ուրիշն ընդհ. հասոյթին 61 $\frac{0}{100}$ ինչ ատի եղած է ծախքը, որուն ամենակարեւոր մասը կը կազմէ կրթական յատկացումը։ Այսպէս՝ Ընդհ. հասոյթին՝

- 25 $\frac{0}{100}$ ր յատկացուած է Բերայի թաղին կրթական գործին
 7 $\frac{1}{4}$ $\frac{0}{100}$ ր արուած է Բերայի թաղին Որբախնամին և Հ. Օ. Մ. ի իրր նպաստ
 8 $\frac{3}{4}$ $\frac{0}{100}$ ր արուած է Կալուածական արոց և իճարէի
 8 $\frac{0}{100}$ ր յատկացուած է տոկոսաւոր փոխառութեանց տոկոսին վճարման
 4 $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$ ր » » հասութեալեր կալուածոց և մանաւանդ Բերայի
 եկեղեցեաց և վարժարանաց նորոգութեան ծախույ
 1 $\frac{3}{4}$ $\frac{0}{100}$ ր արուած է ապահովագրութեան համար
 2 $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$ ր » » պաշտօնէութեան թոշակներուն համար
 1 $\frac{2}{2}$ $\frac{0}{100}$ ր » » դատաւարական ծախույ համար, և իրր
 3 $\frac{0}{100}$ ն ալ զանազան ծախույ համար, որոնց մանրամասնութիւնը հետ-

քըրքիւնները կրնան տեսնել ընդհ. վիճակացոյցին չ'բայ ակնարկ մը ձգելով։ Աւելորդ չենք կարծել ուրիշն ի վեր հանել թէ Բանձնաժողովս չափէն աւելի խնայող եղած է իր բուն իսկ ժառանգարական ծախույ մէջ և իր բոլոր ուշադրութիւնը նուիրած է՝ կրթական գործին ստատրելի գատ, զլիստ որաբար կալուածոց ընդարձակման և յաւելման ու բարեկարգութեան։

Ինչպէս արդէն ցոյց տուինք, Բանձնաժողովս իր կողմէն իրր 34,000 ոսկի միայն ծախսելով՝ օժտած է թաղը Թողատեան պանդոկի պէս պատկանելի շէնքով մը։ Այս գումարին 14,458.23 $\frac{1}{2}$ Լ. Վէփիլ եղբայրներէ գնուած և այժմու Թողատեան պանդոկի շէնքին խառնուած կալուածին փոխարժէքը կը նկ կայացնէ, իսկ 19,734.34 ն ալ Սրբանուխ Քաֆիլ և Մեծ Պանդոկի շինութեան համար Բանձնաժողովս կողմէ ծախսուած գումարն է։ Դարձեալ ձեւափոխէ փողոցի տան համար, որ Բանկալթիի Լուսաւորչեան վարժարանն է, Բանձնաժողովս վճարած է 4739.59 $\frac{1}{2}$ Լ. Օսմ.։

Բանձնաժողովս քանիքով է զարձեալ որ կալուածոց վարձքերը տարեկան հոթնասուս հազար օսմ. լիրայէ աւելի գումարի մը բարձրացած են այժմ, մինչդեռ 1893 Մայիս 31ին 2200 լիրա միայն կը ներկայացնէին։ Աւելի բացարձէ ըլլալու համար, ստորեւ կը գնենք վարձքերուն բազմաաւելան ցուցակը.

ԲԱՆԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԿԱՆՈՒԱԾՈՑ ՎԱՐՉՔԵՐՈՒ

Փողոց	Բիւ.	1893 Լ. Օսմ.	1921 Լ. Օսմ.	Փողոց	Բիւ.	1893 Լ. Օսմ.	1921 Լ. Օսմ.
Թէաթրո	2-4	60	1500	Փոխադրեալ			
»	6	36	750	Էրմէնի ֆիլիսէ	20, 22	1482 70	31524
»	8	36	750	»	16	27	1332
»	12	54	1500	»	18	27	864
»	14	78	1620	»	20	27	720
»	16	72	1800	»	20	27	660
»	18	60	1980	Սոլ	3	48	—
»	20	102	3600	»	34րկ	100	—
»	22	66 60	1680	»	7	30	480
Տառաւ.	24-26	96	3300	»	9	24	432
»	28	60	1560	»	11	21	216
»	30	60	1560	»	11րկ	12	—
»	32	66	1560	»	13	27	264
»	34	108	2700	»	15	24	480
»	34րկ	11 10	720	»	17	48	480
»	19	78	540	Պազման, և Քարսիմ ձառան		318 60	—
»	19	30	624	Գէրեզ, կալուածք, որոնց			
»	19	30	624	սեղ կան այժմ Յանեւայք			
»	21	24	540	Բանկայքի (գազինո)			4800
»	23	60	1800	»			540
»	2	48	660	»			825
»	4	48	960	»			7000
»	8	48	1380	Տարածք		18	240
»	12, 14	81	—	ձամնի		—	240
Փոխադրեալ		1412 70	31524	Փոխադր	4		—
					4		—
						2191 30	51097

Այս գումարին վրայ աւելցնելով Թօգաթիկան պանդոկի տարեկան վարձքը 3100 Լ. Օսմ. հնչուհ, կամ իբր 21000 ոսկի թղթադրամ, տարեկան կ'ուսնենանք ընդհ. կարուածոց հաւանք 72,000 Լ. Օ.էն աւելի, ինչ որ բսկ է ամսական 6000 լիրա, իր տեսնուի ուրեմն թէ 2200ի դէմ այժմ ունինք 72,000 լիրա, իբր 35 տնգամ աւելի:

Թօգատիկան պանդոկի վրայ խօսելու առթիւ հարկ կը համարինք ի վեր հանել նաեւ սա պարագան թէ, անոր վարձքը 3100 Օսմ. Լիրա (հնչուհ)


ըլլալուն հակառակ, իրականին մէջ 5900 սակիի վարձու տրուած կը նկատուի այս չէնքը: Բացատրենք թէ ինչպէս.

Տիար Մկրտիչ Թօգաալեան իր կողմէ ծախսած է յիշեալ պանդոկին շինութեան՝ 30,000 Օսմ. Լիրա, (սոյն գումարին մէջ ըլլալով իր կողմէ նուիրուած երկու տուներուն արժէքը), որ բաժնուելով 15 տարիներու վրայ՝ կը ներկայացնէ տարեկան 2000 Օսմ. Լիրա. առկէ զատ հարկ կ'ըլլայ հաշուել նաեւ սոյն 30,000 լիրային տոկոսը, ենթադրենք 6 0/0 սակով. այնպէս որ Տիար Մ. Թօգաալեան վճարած կ'ըլլայ իրականին մէջ հետեւեալ վարձքերը.

Լ. Օսմ.	Լ. Օսմ.	Լ. Օսմ.	Տոկոս	Լիրայի վրայ	
2800	+	2000	+	1800	6 0/0 30000 Ա. տարուան համար
2800	+	2000	+	1680	» 28000 Բ. » »
2800	+	2000	+	1560	» 26000 Գ. » »
2800	+	2000	+	1440	» 24000 Դ. » »
2800	+	2000	+	1320	» 22000 Ե. » »
2800	+	2000	+	1200	» 20000 Ջ. » »
2800	+	2000	+	1080	» 18000 Է. » »
3000	+	2000	+	960	» 16000 Ը. » »
3000	+	2000	+	840	» 14000 Թ. » »
3000	+	2000	+	720	» 12000 Ժ. » »
3100	+	2000	+	600	» 10000 ԺԱ. » »
3100	+	2000	+	480	» 8000 ԺԲ. » »
3100	+	2000	+	360	» 6000 ԺԳ. » »
3100	+	2000	+	240	» 4000 ԺԴ. » »
3100	+	2000	+	120	» 2000 ԺԵ. » »

44100 + 30000 + 14400 որ կ'ընէ ընդ առէնը 88500 Լ. Օսմ., տասնեւհինգ տարուան համար, և կամ իրարու վրայ տարեկան 5900 Լ. Օսմ.:

Հետեւաբար Յանձնաժողովս Ազգին համար շատ շահաւոր գործ մը ի գլուխ հանած ըլլալու գոհունակութիւնը ունի, վերոյիշեալ պայմաններուն մէջ Տիար Մ. Թօգաալեանի վարձու տուած ըլլալով պանդոկը, քանի որ 1908 տարւոյն մէջ տարեկան 6000 սակիի այդ չէնքը վարձող չէր կրնար երեւակայուիլ:



ԳՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0533651